

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

608


Z-20

608(06)
2-11

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

608
2-20
444

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐ
ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ
ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ



ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԿԻՑԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ

932

Յ Ե Ր Ե Չ Ա Ն

31 MAY 2013

295

608(06)

20 JUL 2016

3-11

u

470

ՀԱՍԿ (Բ) 4. ԿԿ.-ի 1930 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-ի ՎՈՐՈՇՆՈՒՄԸ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սոցիալիստական շինարարության և բանվոր դասակարգի ստեղծարար նախաձեռնության վիթխարի ամձան շրջանում բացառիկ նշանակություն է ստանում մասսայական գյուտարարությունը՝ վերսկս արտադրության սոցիալիստական ուղիորդողական գործում բանվորների անխնայական մասնակցության կարևորագույն ձևերից մեկը:

ԿԿ-ը նշում է, վոր գյուտերի, կատարելագործումների, բանվորական առաջարկների ոգնագործումը ձեռնարկություններում և անտեսական որդաններում միանգամայն անբավարար է կազմակերպված, վորպիսին արդյունք է հանդիսանում դասակարգայնորեն թշնամի և լեմենտների մնասարարությունից բղխող քաշքուկի և սարսուժի, արդյունք է այնպանի, վոր անտեսական, պրոֆիտիլենական և կուսակցական կազմակերպությունները միանգամայն անթույլատրելի անշարժություն ու լիակատար անպատասխանատվություն են ցուցաբերում, թերագնահատում են մասսայական գյուտարարության ամբողջ նշանակությունը՝ կադիտալիզմի՝ որոք չտեսնված աշխատանքի արտադրողականության ամում ապահովող նոր տեխնիկա ստեղծելու գործում:

Մասսայական գյուտարարության զարգացումն ու ոգտագործումն առանձնապես սուր ու համառ վիճադրության են հանդիպում մնասարարական և լեմենտների կողմից ձեռնարկություններում, խորհանտեսություններում և գիտահետազոտական ինստիտուտներում:

Յեղնելով այն բանից, վոր մասսայական գյուտարարության կազմակերպումը և ոգտագործումը պետք է դառնան անտեսական, պրոֆիտիլենական, կոմյերիտական և կուսակցական կազմակերպությունների կարևորագույն գործը, ԿԿ-ը վորոչում է.

1007

34739

1. Տնտեսական ժողովմասներին՝ տնտեսական միավորումներին և գործարանային վարչութիւններին՝ լիովին ապահովել բանվորական առաջարկների, կատարելագործումների և գյուտերի ժամանակին քննութիւնը, եքսպերտիզան, հաշվառումը և իրացումը, յուրաքանչյուր ձեռնարկութեամբ ստեղծելով անհրաժեշտ արտադրական բաղա (եքսպերիմենտալ արհեստանոցներ, եքսպերիմենտալ բրիգադներ, Փարգործուսները ոգտագործում, տեխնիկական կոնսուլտացիա և այլն) և զիտա-հետադրողական ինստիտուտները ու ձեռնարկային լաբորատորիաները 1931 թ. աշխատանքի պլանում մտցնելով ամենից ավելի բարդ ու խոշոր առաջարկների և գյուտերի հետադրողական մշակումը, գնահատումը և եքսպերտիզան:

Գյուտարարների և գյուտարարական որդանների ամբողջ աշխատանքը ձեռնարկութեաններում պետք է սերտորեն շարկապել ոսցիտնայացման և վերակառուցման ընդհանուր պլաններին, ձեռնարկութեաններին միջև փորձի սոցիալիստական փոխանակման լայն կազմակերպման աշխատանքի հետ:

2. Կուսակցական, արհեստակցական, կոմյերիտական և տնտեսական կազմակերպութեաններին՝ ապահովել գյուտարարական որդանների ժամանակին կոմպլեկտավորման գործը ձեռնարկութեաններում գյուտարարներով, հարվածայիններով և հասարակական աշխատող մասնագետներով, կոմպլեքտավորումն ավարտելով վոչ ուշ, քան 1931 թ. հունվար ամիսը:

Ուսանողների անընդհատ արտադրական պրակտիկայի ծրագրի մեջ մտցնել գյուտերի, կատարելագործումների և բանվորական առաջարկների տեխնիկական - տնտեսական մշակումը:

Տնտեսական որդաններին՝ ապահովել բանվոր գյուտարարներին նրանց գյուտերի մշակման ժամանակ զիտա-հետադրողական ինստիտուտներն ու լաբորատորիաներն ուղարկելու, ինչպես նաև ամենից ավելի նշքի ընկնող ուսանող գյուտարարներին տեխնիկական ուսումնական հիմնարկներն ավարտելուց հետո զիտա-հետադրողական ինստիտուտներում աշխատանքի առաջ քաշելու իրական հնարավորութեանը:

3. ԺՏԳՍ-ին, բոլոր տնտեսական ժողովմասներին և

տնտեսական որդաններին՝ 1931 թվից սկսած, կոնսուլտիվելու և արդիւնյալներում նախատեսել հատուկ միջոցներ բանվորներին և վարչա-տեխնիկական անձնակազմին առաջարկներ, կատարելագործումներ ու գյուտերի իրացման և պարզեցումն համար, ըստ այնմ կազմակերպելով առաջարկների իրացման ծախքերի և նրանց եֆեկտի համարատեսիան հաշվառման գործը:

4. Հանձնարարել ԺՏԳՍ-ին, Հաղ. ճան. ժողովմասին, ՀՍՄԿՍ-ին և բանգյուղտեսչութեանը՝ կազմակերպել բոլոր չորագործված գյուտերի, կատարելագործումները, բանվորական առաջարկների ստուգումն արդյունաբերութեան մեջ ու տրանսպորտում և ապահովել նրանց իրացումը կարճ ժամանակում, մասսայական գյուտարարութեան հետադաձումն ուղղելով դեպի ներքին ուսուրանները ոգտագործումը, արտադրութեան նեղ տեղերի հաղթահարումը, խմորատային սարքավորումները ու հումքի փոխարինումը խորհրդայինով և աշխատանքի կազմակերպման բարելավումը արտադրութեան մեջ:

5. Հավանութեան տալ ՀՍՄԿՍ-ի վորտչմանը գյուտարարներին մասսայական կամավոր ընկերութեան կազմակերպելու մասին, փորը նպատակ ունի կիրառել մասսայական գյուտարարութեան զարգացման միջոցառումները, աշխատանքի և հասարակական վերահսկողութեան մեթոդներն ամեն տեսակ կատարելագործումներին ու գյուտերին ընթացք տալու, իրացնելու գործում: Բանվոր գյուտարարներին րնկերութեանը պետք է աշխատի պրոֆմիտութեաններին անմիջական գեկավարութեամբ:

ԺՏԳՍ-ին, Հաղ. ճան, ժողովմասին, բոլոր տնտեսական ժողովմասներին և կազմակերպութեաններին՝ ակտիվ մասնակցութեան ունենալ ընկերութեան աշխատանքին և նրան ցույց տալ ամեն տեսակ աջակցութեան:

ՀամԼԿՅՍՄ ԿԿ-ին՝ ապահովել կոմյերիտավորութեան ակտիվ մասնակցութեանը գյուտարարական գործում բյուրոկրատիզմի և քաշքուշի դեմ պայքարելու գործում, ինչպես նաև յերիտասարդութեանը լաբորան ներգրավել գյուտարարական բջիջներն ու գյուտերի իրացման որդաններին աշխատանքում:

6. Հանձնարարել ԽՍՀՄ Կենտրոնական Փրակցեային

արագացնել գյուտարարութեան նոր սրենքի հրատարակութեանը (վոչ ուշ, քան 1931 թ. հունվարի 1-ը), վերն ապահովում է մասսայական գյուտարարութեան զարգացումն ու ոգտագործումը ԽՍՀՄ-ում:

Գյուտարարական օրգանները աշխատանքը շարժապելու և կազմակերպելու նպատակով արդյունաբերութեան մեջ, արանսպորտում և ժողովրդական տնտեսութեան քոլոր ճյուղերում, ԱՊԽ-ին կից կազմակերպել գյուտարարական կառավարական կոմիտե:

7. Համ. Կ(բ)Կ կուլտ-պրոպ րաթնին՝ ապահովել գյուտարարութեան հարցերի ըստ ամենայնի լիակատար լուսարանումն ամբողջ մամալում, ինչպես նաև համապատասխան գրականութեան հրատարակութեանը:

8. ԿՎՀ-ԲԳՏ-ին, Անդրժողկոմատին՝ սխտեմատիկ հսկողութեան և ստուգում սահմանել գյուտերի, կատարելագործումները և բանվորական առաջարկների կատարման մասին կուսակցութեան և կառավարութեան դիրեկտիվների կատարման ստպարդում, գյուտարարութեան վերաբերյալ դիրեկտիվների շնչատարման զեպքերը դիտելով փորպես սպորտունիզմի վատթարագույն տեսակը պրակտիկայում և մեզավորներին խիստ առջժի յեմթարկելով, մինչև իսկ աշխատանքից հանելով և դատի տալով:

Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԳՅՈՒՏԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՎԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԵՆԳԻՐՆԵՐԸ

1. Ընկերութեան խնդիրներն են՝ կազմակերպել և ամեն կերպ զարգացնել մասսայական գյուտարարութեանն ու ուսցիտնալիդատորական շարժումը, նպատակ ունենալով անմիջական մասնակցութեան ունենալ և ամենաակտիվ աջակցութեանը ցույց տալ ԽՍՀՄ-ի վիթխարի սոցիալիստական շինարարութեանը, արդժիկանները կատարմանն ու գեղարկարմանը, բովանդակ ժողովրդական տնտեսութեան ինդուստրացման տեմպերի անչեղ արագացմանը, նրա պաշտպանունակութեան բարձրացմանը, «տեխնիկային տիրապետելու» լողունգի ամենաարագ իրագործմանը, առաջին «10 տարում տեխնիկական տնտեսական տեսակետից առաջավոր կապիտալիստական յերկրներին հասնելու և անցնելու» պատմական մեծ խնդրի բայլչևիկյան լուծմանը:

ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

2. Այդ իրագործելու համար.

ա) ընկերութեանը լայնորեն մասսայականացնում է կուսակցութեան, կառավարութեան և պրոֆսիութեանների դիրեկտիվները մասսայական գյուտարարութեան հարցերի վերաբերյալ, այն անչեղորեն կենսագործելով, վճռական պայքար մղելով մասսայական գյուտարարութեան նշանակութեանն ու պրոստունիստական թերադնահատման դեմ:

բ) ընկերութեանը ծավալում է տեխնիկական պրոպագանդը, համաձայն ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի 1931 թ. ոգոստոսի 5-ի վորոշման, այն սերտորեն շարժապելով մասսայական գյուտարարութեան զարգացման խնդիրների հետ:

գ) ընկերութեանն ամեն կերպ աջակցում և ակտիվ մասնակցում է մասսայական գյուտարարութեան պլանա-

վորմանը, նրան սոցիալիստական վերակառուցման կոնկրետ լինելիքներին համապատասխան ուղղութիւն տալով:

3. Կուսակցական, պրոֆմիութենական և տնտեսական որգանների գործող որենքներին, վորոշումներին և գիբրկտիվներին հիման վրա, ընկերութիւնը պրոֆմիութիւններին գեկավարութիւյամբ տանում և հետեյալ աշխատանքը.

ա) պետական հիմնարկութիւններին, հասարակական և այլ կազմակերպութիւններին հետ կապ և հաստատում ընկերութիւն գործունեյութիւնը վերաբերող հարցերով, պայքարում և բլբերկրատիգմի, սարտաթի, քաջընկի և այլ անտորմալ յերեուլթիներին դեմ գլուտերին և կատարելագործումներին քննութիւն, իրացման ու արմատացման գործում.

բ) ձեռնարկութիւններին, արեստներին և միալորումներին աջակցութիւն և ցույց տալիս կազմակերպելու եքսպերիմենտալ արհեստանոցներ և գործարաններ, փորձակահան-հետադրտական լարորատորիաներ, փորձակայաններ, մասսայական գլուտարարութիւն և սոցիոնալացման դարգացումը հետապնդող հատուկ դարդցներ, դատրնթացներ, ինտրիտուտներ, այդ աշխատանքի վրա հասարակական կոնտրոլ սահմանելով.

գ) ՍՍՀՄ գլուտարարական ուժերին և նրանց նվաճումներին հաշվատում և կատարում, հայտնաբերում և գլուտարարութիւն ազդեցութիւնը յերկրի սոցիալիստական վերակառուցման տեմպերին վրա, գլուտարարական կադրերին մորթիլդացիայի յի յենթարկում, հատուկ առաջադրութիւններին, կոնկրետներին, ցուցահանդեսներին, մամուլի և այլ միջոցատումներով ամենից ավելի ակտուալ տեխնիկական պրոբլեմները մշակելու համար.

դ) գլուտարարական բլբիջներ և կազմակերպում ձեռնարկութիւններում, խորհանտեսութիւններում, կոլտընտեսութիւններում և ՄՏԿներում, ուղղութիւն և տալիս և դարդացնում և նրանց աշխատանքը համադրատասխան սոցիալիստական շինարարութիւն նպատակներին ու ինդիքներին.

յե) կազմակերպում և սոցիոնալիզատորական և գլուտարարական աշխատանքը հարվածային, անտահաշիւային բրիգադներում և արտադրական կոլեկտիվներում, սոցիա-

լիստական մրցութիւն և կազմակերպում ընկերութիւն տնտեսին անդամներին և բլբիջներին միջև գլուտարարութիւն և սոցիոնալացման սոպարիզում մեծ նվաճումներ ձեռք բերելու շուրջը.

զ) անց և կացնում գլուտարարական համադումարները, կոնֆերանսները և հաշիւները, ինչպես նաև մասնակցում և գլուտարարութիւն և սոցիոնալացման հարցերին շուրջը այլ կազմակերպութիւններին կողմից հրավերվող համադումարներին և կոնֆերանսներին.

է) կազմակերպում և գլուտարարներին տներ, գլուտարարական ակումբներ, ցուցահանդեսներ, գլուտարարական անկլուներ և այլն.

ը) կազմակերպում և և մասնակցում և կազմակերպելու գիտական-տեխնիկական և իրավական կոնսուլտացիաներ, դատրնթացներ, դասախոսութիւններ, դրադարաններ, ինքնադարգացման խմբակներ, տեխնիկական խորհրդակցութիւններ և այլն.

թ) աշխատում և բստ ամենայնի սոցիոնալ ձեռով ոգտագործել տալ գլուտարարներին արտադրութիւն մեջ.

ժ) աջակցում և յերիտասարգ գլուտարարներին պարագամունքն արտադրութիւն մեջ և ուսհիմնարկներում, ինչպես նաև հեշագներու գլուտարարներին բնդունելութիւնը միջնակարգ և բարձրագույն տեխնիկական դարդցները, գիտահետադրտական ինտրիտուտները, լարորատորիաները, փորձակայանները և այլն: Հատուկ ուշադրութիւն և դարձում գլուտահետադրտական ինտրիտուտներին բանվորական կադրերին ուժեղացնելու հարցին, աշխատելով ասպերանտուրան լրացնել ատաջին հերթին ընկերութիւն անդամներով.

ի) իր անդամներին աջակցութիւն և ցույց տալիս նրանց գլուտերին և տեխնիկական կատարելագործումներին համար հեղինակի իրավունքը (հեղինակի վկայականներ, պատենտներ) իրավունքն և տեխնիկաարես ձեակերպելու գործում, մասնակցում և գլուտարարներին և տնտկազմակերպութիւններին միջև կնքվելիք տիպային պայմանագրերին մշակմանը, հսկում և պարգեատրման շիւլայի ձիշտ գործադրմանը, մասնակցում և գլուտարարութիւնը վորոշելու աշխատանքին, ինչպես նաև գլուտարարներին ու տնտեսական որգաններին միջև ծագող կոնֆլիկտներին քննութիւնը, քրե-

յական գործ և բաց անում քաղաքացիները հեղինակները դեմ և այլն .

լ) աշխատում և անշեղորեն կիրառել տալ գյուտարարների և նրանց աշխատանքի իրավական ու կուլտուր-կենցաղային պայմանների առողջացման և բարելավման միջոցառումները :

խ) կազմակերպում և արտադրական փորձի սոցիալիստական փորձանակում և ամեն կերպ աջակցում և նրա դարդացմանը («ՍՈ» կարտոտեկի արձատացում, արտադրական եքսպերտիաներ ՈՊՊՏԵ-յի միջոցով և այլն) .

ծ) կազմակերպվում և ոտարերկրյա տեխնիկական փորձի ոչտագործումը (ոչտագործվում և արտասահմանյան գործուղումների նյութերը, ոտարերկրացի բանվորներին և մասնագետներին, փորձնք աշխատում են ԽՍՀՄ-ում, ոտարերկրյա տեխնիկական գրականությունը և այլն) .

կ) մասսայական գյուտարարության աշխատանքը շարկադրում և կոմակազմիայի, Գիտությունները Ակադեմիայի, Գիտահետազոտական ինստիտուտների, մարքսիստտեխնիկների ընկերության հետ և այլն .

հ) աշխատում և ինչքան կարելի չէ մեծ չափով ներդրալել ընկերության մեջ գիտական ուժերին, ճարտարապետտեխնիկական և ազդրտեխնիկական աշխատողներին, տեխնիկական ԲՈՒՀ-երի ուսանողներին և այլն .

ձ) համապատասխան ինստիտուտների առաջ միջնորդություն և հարուցում աչքի ընկնող հասարակական աշխատող գյուտարարներին վարձատրելու և նրանի շքանշանով, Աշխատանքային կարմիր դրոշի, Կարմիր աստղի շքանշանով, անհատական կենսաթոշակով և այլն .

4. ընկերությունն իրավաբանական անձի իրավունքներ և վայելում և իրբև աջգրխին կարող է .

ա) ձեռք բերել իր նպատակների ու խնդիրների իրագործման համար անհրաժեշտ գույք, տիրապետել նրան, կնքել ամեն տեսակ պայմանադրեր, վորոնք անմիջապես համապատասխանեն ընկերության նպատակներին և խնդիրներին, անհրաժեշտության դեպքում համապատասխան հարցեր հարուցել և պատասխանել դատարանի առաջ .

բ) ներկայացուցիչներ տալ բոլոր հիմնարկություններում ու կազմակերպություններում՝ ընկերության նպատակ-

ների և խնդիրների իրագործման հետ կապված գործերով և հարցերով .

գ) հրատարակել և տարածել պարբերական ու այլ հրատարակություններ գյուտարարության և ռացիոնալացման հարցերի, ինչպես նաև ընկերության խնդիրներից բրդխոդ բոլոր այլ հարցերի շուրջը . մամուլի միջոցով ոպերատիվ աշխատանք կատարել գյուտարարական մասսաներին կազմակերպելու և մորիլլիացիայի յենթարկելու ուղղությամբ, պայքարելու այն խնդիրների լուծման համար, վորը նրանց առաջադրել են կուսակցությունը և կառավարությունը .

դ) ունենալ կենտրոնական ու տեղական գրադարաններ և կազմակերպել այլ կուլտ-կրթական հիմնարկներ իր անդամների համար .

յև) ունենալ իր կնիքն ու շտամպը .

յ) ունենալ իր անդամատոմսերը, նշանները և այլն .

5. Իր բոլոր պարտականությունների համար ընկերությունը պատասխանատու չէ իր միջոցներով :

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ

6. Ընկերությունը բաղկացած է կամավոր կերպով անդամագրվող բանվորներից, կոլանախականներից, ծառայողներից (ղինվորական ծառայողներից և պրոֆսիլության անդամներից հավատարեցվածներից), ճարտարապետտեխնիկական և ազդրտեխնիկական աշխատողներից, ինչպես նաև թե՛ գյուտարար յեղող և թե՛ մասսայական գյուտարարությանն ախտիվ աջակցություն ցույց տվող մենատնտես չքավոր ու միջակ գյուղացիներից :

7. Ընկերության անդամ լինել չեն կարող այն անձնափորությունները, վորոնք դատավճռով իրավադրելված են, ինչպես նաև այն անձնապրությունները, վորոնք հայտնի չեն իրենց հակահասարակական վարքով գյուտարարության Փրանտում :

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՅԵՎ ՀԵՌԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

8. Ընկերության անդամների ընդունելությունը կատարվում է, վորպես կանոն, նրա տեղական ստորին կազ-

մակերպութեան յանդիման կողմից, բլծի կամ կոլեկտիվի անդամների ընդհանուր ժողովներում: Ընդունվում են ինչպես անհատաբար, այնպես էլ կոլեկտիվ կերպով (ամբողջ բլծիներով և խմբերով): Այն անձնավորութեանները, վորոնք ցանկանում են անպամագրվել ընկերութեանը, այդ մասին դիմում են տալիս բլծին՝ կցելով իրենց վերաբերյալ անհրաժեշտ տեղեկութեանները:

9. Ընկերութեան մեջ չընդունելը կամ հեռացումը կարող է բողոքարկվել համապատասխան վերադատ կազմակերպութեան առաջ:

10. Ընկերութեանից հեռացնելը, պայմանական, ժամանակավոր թե լիակատար, իրբև սույթի վերջին միջոց, կարող է կատարվել համապատասխան տեղական կազակերպութեան անդամների ընդհանուր ժողովի վորոշմամբ, հետևյալ դեպքերում.

ա) յեթե ընկերութեան անդամը կատարել է հասարակականորեն արատավորող քայլեր, վորոնք գցում են ընկերութեան հեղինակութեանը կամ զփախացնում են նրա խնդիրների և նպատակների իրադրծումը.

բ) մեկից ավելի անգամ խախտել են կանոնադրութեանը և հասարակական կարգապահութեանը, հատկապես, յեթե դեմ են գործել ընկերութեան կենտրոնական և տեղական որդանների վորոշումների կենսագործմանը:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԿԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Ընկերութեան յուրաքանչյուր անդամ ընտրելու և ընտրվելու իրավունք ունի ընկերութեան բոլոր պաշտոններում և վայելում է վճռական ձայնի իրավունք ընդհանուր ժողովներում:

12. Ընկերութեան բոլոր անդամները հավասար իրավունք ունեն աջակցութեան և պաշտպանութեան ստանալու ընկերութեանից, «գործունեյութեանը և իրավունքները» բաժնի համապատասխան պարագրաֆների հիման վրա:

13. Ընկերութեան բոլոր անդամները պարտավոր են յենթարկվել ընկերութեան կանոնադրութեանը, նրա համա-

պումարների և այլ որդանների վորոշումներին, և դրա հետ միասին ամեն կերպ աջակցել ընկերութեան գործունեյութեան զարգացմանը և նրա խնդիրների ու նպատակների հաջող կենսագործմանը:

14. Իր ամենորոյա աշխատանքի ընթացքում ընկերութեան յուրաքանչյուր անդամ պարտավոր է ամեն կերպ աջակցութեան յուր յոյց տալ սոցիալիստական շինարարութեանը վոյ միայն իր անձնական տեխնիկական ստեղծագործութեամբ, այլև ակտիվ մասնակցութեան ունենալով սոցմրցման և հարվածայնութեան զարգացմանը, արտադրական խորհրդակցութեանների և պրոֆմիտեթենական կազմակերպութեանների աշխատանքին, այն ամբողջ պայքարին, վոր մղում է ընկերութեանն արդյունարեութեան և գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման, յերկրի պաշտպանունակութեան ուժեղացման, «հասնելու և անցնելու» խնդրի իրագործման համար:

15. Ընկերութեան յուրաքանչյուր անդամի հիմնական պարտականութեաններից մեկն է հանդիսանում պայքարել մանր-բուրժուական տենդենցների և խեղաթյուրումների դեմ՝ ընկերութեան շրջանում և հասարակական աշխատող գյուտարարներ պատաստել հարվածային բանվորներից ու կոլտնտեսականներից:

16. Իր աշխատանքի արդյունքները բարելավելու և նրանց հասարակական ոգտակարութեանն ավելացնելու նպատակով, ընկերութեան յուրաքանչյուր անդամ պետք է անչեղորեն ձգտի բարձրացնելու իր զիտական ու տեխնիկական զիտելիքները՝ ինքնադրդացման և դեպի այլ նպատակն առաջնորդող ամեն տեսակ այլ ուղիների ոգտագործման միջոցով, ինչպես նաև բոլոր միջոցներով ոգնի բարձրացնելու վոյ միայն ընկերութեան անդամների, այլև բանվորական և կոլտնտեսական լայն մասսաների զիտական-տեխնիկական վորակավորումը:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ՅԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

17. Գյուտարարների համամիտեթենական ընկերութեան գործունեյութեանը տարածվում է ԽՍՀՄ-ի ամբողջ տերի-

տարիայի վրա. ընկերութեանն աշխատում և ՀԱՄԿԻ-ի ան-
միջական ղեկավարութեամբ:

18. Գյուտարարների համամիութենական ընկերութեան
նր կառուցվում և ըստ տերիտորիալ նշանի:

19. Ընկերութեան որդաններն են.

ա) համամիութենական համագումարները և կոնֆե-
րանսները, համամիութենական կենտրոնական խորհուրդը
և նրա նախադասութիւնը.

բ) ընկերութեան հանրապետական, մարզային, յերկ-
րային, շրջանային և քաղաքային կազմակերպութիւններն
ու նրանց կոնֆերանսները, խորհուրդները և վերջիններիս
նախադասութիւնները.

գ) գյուտարարական բջիջները (նրանց խորհուրդները)
ձեռնարկութիւններում, հանգերում, յերկաթուղային կա-
յարաններում, խորհանտեսութիւններում, կայտնտեսու-
թիւններում, Մեքենա-Տրակտորային կայաններում:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՅԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԸ

20. Գյուտարարների համամիութենական ընկերութեան
բարձրագույն ղեկավար որդանն և հանդիսանում գյուտա-
բարների համամիութենական համագումարը, վորը հրա-
վիրվում և վոչ պակաս, քան յերկու տարին մեկ անգամ:

21. Ընկերութեան գործունեութիւնը ղեկավարելու
համար հերթական համագումարների միջև ընկած ժամա-
նակաշրջանում, ընկերութեան համագումարն ընտրում և
ընկերութեան կենտրոնական խորհուրդ, վորն աշխատում և
ՀԱՄԿԻ-ի անմիջական ղեկավարութեամբ:

22. Կենտրոնական խորհուրդը գործադիր որդան և հան-
դիսանում համագումարների և կոնֆերանսների նկատմամբ,
իսկ ղեկավար որդան՝ նրա բոլոր հիմնարկների և տեղական
որդանների նկատմամբ: Կենտրոնական խորհուրդի քննութեանն
ու հաստատմանը յենթակա յեն հասկապես.

ա) ամբողջ ընկերութեան տարեկան նախահաշիվը.

բ) ընկերութեան կենտրոնական հիմնարկների, ինչպէս
և անմիջական կենտրոնական խորհուրդին յենթակա տեղական

որդանների հաշվետվութիւնները, նախահաշիվները, կա-
ռուցվածքը և հաստիքները.

գ) նույն հիմնարկների ու որդանների, ինչպէս և ըն-
կերութեան անդամների տեղական կոնֆերանսների և պատ-
գամավորական ժողովների սկզբունքային բնույթի հարցե-
րին վերաբերող վորոշումները:

23. Կենտրոնական խորհուրդն իրավունք ունի.

ա) վերացնել, դադարեցնել և վերաքննել տալ ընկերու-
թեան ստորադաս որդանները բոլոր վորոշումներն ու կար-
գադրութիւններն այն դեպքերում, յեբր այդ վորոշումներն
ու կարգադրութիւնները հակասում են ներկա կանոնա-
դրութեանը, ընկերութեան համագումարների ու համամիու-
թենական կոնֆերանսների, ինչպէս նաև կենտրոնական
խորհուրդի վորոշումներին ու դիրեկտիվներին.

բ) բացատրել ընկերութեան ստորադաս որդանների ա-
ռանձին պաշտոնատար անձանց թեկնածութիւնները, ինչ-
պէս նաև ցրել այն ստորադաս որդաններն ու կազմակեր-
պութիւնները, վորոնց գործունեութիւնն անհամատեղե-
լի կլինի ամբողջ ընկերութեան խնդիրների ու նպատակների
հետ կամ կխախտի նրա կենսունակութիւնն ու հեղինակու-
թիւնը:

24. Ընկերութեան ընթացիկ ղեկավար աշխատանքը վա-
րելու համար կենտրոնական խորհուրդն ընտրում և նախա-
դասութիւն:

25. Կենտրոնական խորհուրդն իր գործունեութեան հա-
մար պատասխանատու յե համամիութենական համագումար-
րի առաջ, իսկ նախագահութիւնը՝ կենտրոնական խորհուրդի
առաջ:

26. Ընկերութեան գործունեութեան ամենորջա ղեկա-
վարութիւնը պրոֆիկադմակերպութիւնների կողմից ապա-
հովելու նպատակով Գյուտարարների Համամիութենական
Ընկերութեանը կենտրոնական խորհուրդի և նախադասութեան
կազմի մեջ մացնում և ՀԱՄԿԻ-ի յերկու ներկայացուցիչ-
ների, իսկ ծայրամասերում մեկական ներկայացուցիչներ են
մտցվում տեղական պրոֆիկադմակերպութիւններից (ձեռ-
նարկութիւններում, խորհանտեսութիւններում և այլն
մտցվում են գործարկումների ներկայացուցիչները):

27. Ընկերութեան տեղական կազմակերպութիւնների

հերթական կոնֆերանսները հրավիրվում են ամեն տարի, համապատասխան վերադաս որդանների գիտությունները:

28. Ընկերության ստորին բջիջ կազմակերպելու համար անհրաժեշտ է անուվազն ընկերության 5 անդամի առկայությունը: Յերբ անդամների թիվն ավելի քիչ է, այդ դեպքում ստեղծվում են գյուտարարների խմբեր և հնարավորության դեպքում միացվում են ընկերության մոտակա բջիջին:

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆՆԸ ՅԵՎ ՎԵՐՍՏՈՒԳՈՒՄԸ

29. Տնտեսական-ֆինանսական ուղերաչիաները վերաստուգելու համար համապատասխան համազուտվածներում, կոնֆերանսներում և ժողովներում ընարվում են վերստուգելի հանձնաժողովներ անուվազն յերեք անդամից և յերկու թեկնածուից բաղկացած, վորոնք գործում են վերստուգելի որդանի լիազորության ամբողջ ժամանակաշրջանում:

30. Ընկերությունն իր գործունեություն մասին տարեկան հաշվետվությունը ներկայացնում է ՀԱՄԿԽ-ին, ԽՍՀՄ Բանալուղտեսչությանը և ԱՊԽ-հի կից Գյուտարարական կոմիտեյին: Ընկերությունը վերջիններիս պահանջով կամ իր նախաձեռնությունը հաշվետվություն և ներկայացնում նրանց իր գործունեություն մասին:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

31. Ընկերության միջոցները կազմվում են՝
ա) գյուտարարության և ուղերաչիաների աջակցության ֆունդերի տարր առկոսային հատկացումներից ձեռնարկություններում, վորպիսի միջոցները, համաձայն ԽՍՀՄ կենտրոնի կողմից և ժողկոմխորհի որոշումով 13-ի վորոշման, գրվում են գյուտարարներին ընկերության արամադրության տակ:

- բ) մուտքի և անդամակցական վճարներից.
- գ) կամավոր մուծումներից.
- դ) ընկերության հրատարակությունների և կուլակրթական հիմնարկների յեկամուտներից.
- ե) ընթացիկ հաշիվների տոկոսներից.
- զ) ընկերության նպատակներին ու ինդիքներին համապատասխանող այլ մուծումներից:

32. Մուտքի և անդամակցական վճարները դանձվում են.

- ա) ամսական մինչև 100 ո. մշտական աշխատավարձ ստացող անձնավորություններից դանձվում է 50 կ. մուտքի վճար, իսկ մնացածներից 1 ուտբլի (չարբային կարմիր բանալայիններից և կարմիր նավատորմի ղալկիներից, պիտոներից և դպրոցականներից մուտքի վճար չի դանձվում.
- բ) ամսական անդամավճարները դանձվում են 15 կուպեկի չափով.
- գ) անդամավճարները տրվում են յեռամսյակներով (և մարվում են ընկերության անդամակցական մարկանսերով):

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՆՐԱ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԼՈՒԾԱՐՔԸ

33. Ընկերության յուծարքը կարող է տեղի ունենալ ԽՍՀՄ կառավարության կամ ՀԱՄԿԽ-ի կամ ընկերության անդամների համամիութենական համազուտվարի վորոշմամբ:


34. Ընկերության յուծարքը կատարվում է հատուկ յուծարքային հանձնաժողովների միջոցով, վոր ընտրվում է համամիութենական համազուտվարի կողմից անուվազն յերեք հոգու կազմով, յեթե յուծարքի մասին վորոշումն ընդունել է համամիութենական համազուտվարը, կամ նշանակվում է ընկերության կենտրոնական Խորհրդի կողմից, յուծարքի մասին վորոշում ընդունած որդանի հետ միասին:

35. Ընկերության յուծարքի կարգ սահմանում է այն որդանը, վորը վորոշում է ընդունել ընկերության յուծարքի մասին:

36. Եուծարքը վերջացնելուց հետո ընկերության բոլոր գործերը և նրա գույքը փոխանցվում են այն կազմակերպությանը, վորը մատնանշում են կենտրոնական կառավարական որդանները:

37. Ընկերության այս կամ այն որդանի յուծարքի դեպքում, յուծարքի յեկնարկվող որդանի բոլոր գործերը, միջոցները և գույքը փոխանցվում են ընկերության վերադաս որդանին:

1008
34739



Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Խորհտնտեսություններում, ՄՏԿ-ներում և կորսնտեսություններում գյուտարարների համամիութենական ընկերությունից կազմակերպելու և նրանց աշխատանքի մասին

ԲՁԻՁՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

1. Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը պահանջում է մորթիլիզացիայի յենթարկել խորհանտեսությունների ու ՄՏԿ-ների բանվորներին և կոլտնտեսականների լայն մասսաներին տեխնիկական ստեղծագործությունը: Մասսայական գյուտարարության, փորձարարության և ռացիոնալացման դարձացման ու ոգտագործման լավագույն պայմաններ ստեղծելու, բոլոր արժեքավոր ճանաչված գյուտերն ու առաջարկներն անհատալի սոցիալիստական գյուղատնտեսության մեջ արմատացնելու պայքարն ուժեղացնելու և գյուտարարական միտքը պլանավորելու համար ՄՏԿ-ներին, մեքենա-տրակտորային ֆերմաներին, խորհանտեսություններին և կոլտնտեսություններին կից կազմակերպվում են գյուտարարների համամիութենական ընկերության բջիջներ:

ԲՁԻՁՆԵՐԻ ԿԱԶՄԸ

2. Այս բջիջները միավորում են գյուտարարներին, կատարելագործողներին, փորձարարներին և խորհանտեսությունների ու ՄՏԿ-ների բոլոր այն բանվորներին ու ծառայողներին, կոլտնտեսականներին, ագրո-տեխնիկական և ճարտարապետ-տեխնիկական աշխատողներին, վորոնք հետաքրքրվում են գյուտարարության հարցերով և ակտիվ աշխատակցություն են ցույց տալիս նրա դարձացմանը: Բջիջի անդամների շարքում ընդունվում են պրոֆմիության անդամ-

ները, կոլտնտեսականները, ինչպես նաև չքավոր ու միջակ մենատնտեսները:

Մորհանտեսություններում, ՄՏԿ-ներում և մեքենատրակտորային ֆերմաներում ընկերության բջիջների անմիջական ղեկավարությունն ընկնում է պրոֆկադմակերպությունների (բանկոմների) վրա: Կոլտնտեսություններում ընկերության բջիջներին ղեկավարում են այն խորհանտեսությունների, ՄՏԿ-ների կամ մեքենա-տրակտորային ֆերմաների պրոֆկադմակերպությունները, վորոնց գործունեության շրջանում գտնվում են տվյալ կոլտնտեսությունները: Շրջանում ՄՏԿ-ներ և խորհանտեսություններ չլինելու դեպքում կոլտնտեսական բջիջների կազմակերպումն ու ղեկավարությունն ընկնում է անմիջապես շրջպրոֆտոր-հուրդների վրա:

ԲՁԻՁՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅՈՒՆԸ

3. Բջիջները գործնական աշխատանքի նպատակն են՝ կատարելագործել և բարելավել արտադրական պրոցեսները, առավելադուրս չափով արմատացնել մեխանիզացիան և երկտրիֆիկացիան: Բջիջները պետք է յերևան հանեն տնտեսավարման հետամնաց յեղանակներն ու պրոմները դատում, դոմում և այլն, ինչպես նաև աշխատանքի հետամնաց տեխնիկական յեղանակները վերանորոգման արհեստանոցներում, մեքենաների, վառելանյութի, քուլ յուղերի և այլ նյութերի ոգտագործման ինդրում: Բջիջն իր անդամների և սոցիալիստական հողագործության բոլոր հարվածայինների ստեղծարար նախաձեռնությունը պետք է մորթիլիզացիայի յենթարկել տնտեսավարման հետամնաց յեղանակները լավագույն, կատարելագործված յեղանակներով փոխարինելու ուղիներ վորոնելու ուղղությամբ: Բջիջը պետք է ձգտի վորոնելու աշխատանքի արտադրողականության բարձրացման, արտադրանքի ինքնարժեքի իջեցման միջոցներ, մեքենայացման նոր ձևեր, պայքարի կորուստների դեմ, գյուղատնտեսության վնասատուների դեմ և այլն: Այս աճնի համար առաջին հերթին անհրաժեշտ է ուղի-ուղի ծանոթանալ արտադրության բնույթին և առամնահատկություններին, նրա երկրությանը, նրանում գոյություն ունեցող աշխատանքի տեխնիկական յեղանակներին և այլն:

4. ԲՆԻՋԸ պետք է թարծրացնի իր անդամների վարակա-
փորձումն ու տեխնիկական մակարդակը: Այդ նպատակով
նա իր բոլոր անդամներին պետք է ներգրավի տեխնիկական
ուսուցման գոյություն ունեցող ցանցում, ինչպես նաև հա-
տուկ լրացուցիչ ուսուցում կազմակերպել գյուտարարների
համար:

5. ԲՆԻՋԸ և նրա առանձին անդամների ստեղծագործա-
կան աշխատանքը պետք է շարկապվի գիտա-հետազոտական
ինստիտուտների և ռացիոնալիզատորական որգանների, գո-
նալ և փորձնական կայանների, հարվածային բրիգադների
և արտադրական խորհրդակցությունների աշխատանքի հետ:

6. ԲՆԻՋԸ պետք է ակտիվ մասնակցություն ունենա գյու-
տարարական մտքի պլանավորմանը՝ սոցիալիստական վե-
րակառուցման կոնկրետ խնդիրներին համապատասխանող
ուղղությամբ, գյուտարարներին արվող սոցիալիստական
պարտիերների մշակմանը, այս ամենի շուրջը համապատաս-
խան մասսայական աշխատանքի ծավալմանը (առաջարկու-
թյունների փոխառություն և այլն):

7. ԲՆԻՋԸ ամեն կերպ նպաստում է արմատացնելու այս
կամ այն գյուտերն ու առաջարկները, վրոնք ստացվում են
ինչպես սովյալ կոլեկտիվի գյուտարարներից, այնպես էլ
դքսից (հասակապես նրանք, վրո ստացվում են «ԱՈ» կարտո-
տեկի միջոցով):

8. ԲՆԻՋԸ հասարակական կոնարդ է կազմակերպում
տեղական գյուտարարական և ռացիոնալիզատորական որ-
գանների աշխատանքի վրա, հետևում է, փորպեզի կենսա-
գործվին վարչության կողմից ընդունված բոլոր ոգտակար
առաջարկությունները և այլն, չեփություն է կազմակեր-
պում առանձին արժեքավոր գյուտերի վրա, յերևան է հա-
նում գյուտերի քննության և իրացման գործում յեղած
ձգձգումների դեպքերը, անհողի վերաբերմունքի, գյուտա-
րարներին հարածելու փաստերը, ցուցադրական դատեր և
կազմակերպում մասսաների ստեղծարար նախաձեռնություն-
եր խեղճողների հանդեպ:

9. ԲՆԻՋԸ լայնորեն ժողովրդականացնում է կուսակցու-
թյան, կառավարության, պրոֆմիտութեանական որգանների,
կոլտնտկենտորների և այլոց բոլոր դիրեկտիվները մասսայա-
կան գյուտարարության հարցերի վերաբերյալ (մասնավո-

րպես գյուտարարներին արվող արտոնությունների հար-
ցը):

10. ԲՆԻՋԸ ազնում է իր անդամներին նրանց գյուտերը
տեխնիկապես ձևակերպելու, նրանց գյուտերի համար հե-
ղինակի իրավունք ձեռք բերելու և գյուտարարության զա-
նազան անսակի հարցերին յուծում տալու գործում:

11. Գյուտարարության նոր օրենքի և ԽՍՀՄ Հողփոյ-
կումարի համապատասխան դիրեկտիվների հիման վրա ԲՆԻՋԸ
իր անդամներին սժանդակում է, փորպեզի նրանք իրենց
գյուտերը մշակելու և իրապործելու ընթացքում ազատվեն
իրենց հիմնական աշխատանքից (պահպանելով միջին աշ-
խատավարձը սովյալ ձեռնարկության, այն է՝ սովյալ առա-
ջարկի իրագործման խնդրով շահագրգռված կոլտնտեսու-
թյան կամ տնտեսական որգանի հաշվին):

12. Գյուտարարների ընկերության վերադաս խորհուրդ-
ների, համապատասխան պրոֆկազմակերպությունների և
սոցիալիստական հողապործության որգանների միջոցով
ԲՆԻՋԸ հարց է դնում՝

ա) լախազույն գյուտարարներին փոխադրել հիմնական
մասնադիտության համաձայն աշխատելու գիտա-հետազո-
տական ինստիտուտներում, գոնալ և փորձնական կայաննե-
րում և այլն:

բ) գյուտարարներին առաջ քաշել մշտական աշխատանք
կատարելու ռացիոնալիզատորական և գյուտարարական
որգաններում, ինչպես սովյալ ձեռնարկությունում, այնպես
էլ նրանից դուրս:

գ) տեխնիկական փորձի փոխանակման նպատակներով
գյուտարարներին զործուղել ցուցահանդեսներ և եքսկուր-
սիաներ, որինակելի ձեռնարկությունները, խորհանտեսու-
թյունները, ՄՏԿ-ները, կոլտնտեսությունները, արասահ-
ման և այլն:

դ) տեխնիկական ուսման ուղարկել տեխնիկական ԲՈՒՀ-
երը, տեխնիկումները և համապատասխան դատրթացները:

13. ԲՆԻՋԸ տեխնիկական փորձի փոխանակում է կազ-
մակերպում միաման տիպի ձեռնարկությունների, խորհ-
անտեսությունների և կոլտնտեսությունների հետ:

14. ԲՆԻՋԸ տանում է իր ձեռնարկության գյուտարարու-

կան ուժերի կազմակերպման ու հաշվառման դործը, տեխնիկական նվաճումների, դյուետերի տնտեսական էֆեկտի հաշվառումը և այլն:

ԲԶԻՋԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

15. ԲՆԻՋԻ յուրաքանչյուր անդամ վճռական ճաշի իրավունք է վայելում և կարող է ընտրվել բՆԻՋԻ ղեկավար օրգաններում, դյուետարարների կոնֆերանսներում, դյուետարարական մարմինների ներկայացուցչից և այլն:

16. Բոլոր անդամները հավասար չտիրով իրավունք ունեն աջակցություն և շահերի պաշտպանություն ստանալ բՆԻՋԻ կողմից, իրենց դյուետերի համար հեղինակի վկայական ձեռք բերելու և նման այլ հարցերում:

17. ԲՆԻՋԻ յուրաքանչյուր անդամն իր ամենօրյա աշխատանքում պետք է ոժանդակի դյուետանտեսություն սոցիալիստական վերակառուցմանը և վողջ սոցիալիստական շինարարությունը վոչ միայն իր անհատական տեխնիկական ստեղծագործություններ, այլև ակտիվ մասնակցելով բՆԻՋԻ արտադրական - տեխնիկական, ուսումնական-պրոպագանդիստական, հաշվառման-վերահսկման և կազմակերպչական գործունեությունը, ինչպես նաև հարվածային բրիգադներին, արտադրական խորհրդակցությունների և նման այլ աշխատանքներին:

ԲՆԻՋԻ բոլոր անդամները և ինքը բՆԻՋԻ ամբողջապես վերցրած իրենց գործունեության ընթացքում ղեկավարվում են դյուետարարների համամիութենական ընկերության կանոնադրություններով:

ԲԶԻՋԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ

18. ԲՆԻՋԻ ղեկավար որդանն է հանդիսանում ընդհանուր ժողովը, վորը գումարվում է վոչ պակաս, քան յերեք ամիսը մեկ անգամ: Այս ժողովներն որինական են համարվում, յեթե ներկա յե լինում վոչ պակաս, քան բոլոր անդամների յերկու յերրորդ մասը:

19. Ամբողջ աշխատանքի մշտական ղեկավարման և

կազմակերպման համար ընդհանուր ժողովն ընտրում է բյուրո, վորը բաղկացած է լինում 3-ից մինչև 7 հոգուց: Բյուրոն իր կազմից ընտրում է պատասխանատու քարտուղար:

Բյուրոն ընտրվում է միջին հաշվով մեկ տարուց վոչ ավելի ժամկետով, իր գործունեություն համար պատասխանատու յե բՆԻՋԻ ընդհանուր ժողովի, տվյալ բՆԻՋԻ ղեկավարող պրոֆկազմակերպություն և դյուետարարների ընկերության վերադաս օրգանների առաջ:

20. ԲՆԻՋԻ իր աշխատանքը կատարում է այն գրամական միջոցներով, վորոնք բաց են թողնվում բանկոմի նախահաշվի համաձայն, ինչպես նաև դյուետարարության ոժանդակության ֆոնդից:

ՄՏԳ-ների, մեքենա-տրակտորային ֆերմաների, խորհատեսությունների և կոլտնտեսությունների վարչությունները պարտավոր են բՆԻՋԻ տրամադրել հատուկ շենք՝ ժողովների և մշտական աշխատանքի համար (ճյուտարարների անկյուններ) և այլն):

ՀԱՄԿԵ-ին կից Գյուետարարների Համամիութենական Ընկերություն՝ ՊԵՏՈՒԽՈՎ

Ի օ. ՄՏԳ-ների բանվորության և բատրակների միության կի-ի նախագահի՝ ՊԱՆՈՄՈՎԻՉ

Ի օ. Հողագործական խորհատեսությունների բանվորների միության կի-ի նախագահի՝ ԿԵԼՄԱՆ

Անասնապահական խորհատեսությունների բանվորների միության կի-ի նախագահ՝

ԳՐԻԳՈՐՅԵՎ

ԽՍՀՄ Կոլտնտեսական վարչության նախագահի տեղակալ՝ ԱԼԵԿՍԵՅԵՎ

ՄԵՔԵՆԱ-ՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ, ՄԵՔԵՆԱ-ՏՐԱԿ-
ՏՈՐԱՅԻՆ ՅԵՐՄԱՆՆԵՐԻ, ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,
ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՎԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ԱՐԳՅՈՒՆԱՐԵՐԱԿԱՆ ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՅՈՒՏԱՐԱՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԳՆԵՐԻ
ՅԵՎ ԲԶԻՋՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ա. Խարհուրդները և բջիջները կոլտնտեսություններում,
ՄՏ կայաններում և ՄՏ փերմաններում

1. ՄՏ կայաններում և նրանց մերձակա կոլտնտեսու-
թյուններում ընկերության ղեկավար մարմինն և հանդի-
սանում խորհուրդը, վոր ընտրվում է ՄՏԿ-ներում և նրանց
մերձակա կոլտնտեսություններում յեղած ընկերության
անդամների կոնֆերենցիայում:

Խորհուրդն ընտրում է գործարար յեռակ և իր աշխա-
տանքը տանում է ՄՏԿ-ի բանվորական կոմիտեյի (նրա ար-
տադրական սեկտորի) և ընկերության վերադաս մարմին-
ների ընդհանուր ղեկավարության ներքո:

Գյուտարարական ընկերության բջիջ կարելի յե ստեղ-
ծել յուրաքանչյուր կոլտնտեսությունում, ՄՏԿ-ում և մե-
քենա-տրակտորային ֆերմայում, յեթե աջանեղ կա վաչ
պակաս, քան ընկերության 10 անդամ:

2. Բջիջն իր անդամների ընդհանուր Ժողովում ընտրում
է բջիջի բյուրո (3-ից մինչև 7 հոգուց):

Բյուրոն ընտրվում է մեկ տարով:

3. ՄՏԿ-ին կից բջիջը, ինչպես նաև կոլտնտեսության
կից բջիջն ընտրում է պատասխանատու քարտուղար և աշ-
խատում է ՄՏԿ-ի բանկոմին կից ընկերության փնջային
խորհրդի անմիջական ղեկավարությամ:

4. Այն դեպքում, յերբ կոլտնտեսության շրջանում
ՄՏԿ կամ խորհանտեսություն չկա, կամ թե կոլտնտեսու-
թյունն ունի մի քանի բջիջ և կոլտնտեսությունում կա

փնջային խորհուրդ, ապա՝ բջիջին կամ խորհուրդին ղեկավար-
վարություն է յուրյց տալիս շրջարտֆխորհրդին կից ընկե-
րության խորհուրդը կամ անմիջակա ինքը՝ շրջարտֆխոր-
հուրդը:

5. ՄՏԿ-ներին, կոլտնտեսությունների և խորհանտե-
սությունների բջիջներն ու խորհուրդներն իրենց կազմի
ներսում կազմակերպում են 4 սեկտոր:

1. Կարգ-հրահանգչական և կատարման ստուգման:

2. Պլանային - տնտեսական:

3. Ազրո-տեխնիկական պրոպագանդի և փորձի փոխա-
նակման:

4. Գանձադահլան և անդամավճարների հավաքման:

1. Կարգ-հրահանգչական և կատարման ստուգման սեկ-
տորը հետևյալ հարցերով է զբաղվում:

ա) ընկերության անդամների շարքն և ներդրվում
գյուտարարներին, կատարելագործողներին, փորձակատար-
ներին և գյուտարարությամբ հետաքրքրվող ու նրա դար-
գացմանն աջակցող կոլտնտեսականներին, ազրոտմներին ու
ճարտարապետ-տեխնիկական աշխատողներին, ինչպես նաև
մենատնտես շքախորհրդին ու միջակներին:

բ) Ֆևակերպում է անդամությունը, անկետաներ և լեց-
նում, անդամատոմսեր և բաժանում, յուրաքանչյուր ան-
դամի ծանոթացնում է ընկերության կանոնադրության
հետ:

գ) նոր բջիջներ է կազմակերպում:

դ) նախապատրաստում և հրավիրում է ժողովներ և
կոնֆերենցիաներ:

յ) գյուտարարական ուժերի ճիշտ դասավորում է
կատարում, գյուտարարական աշխատողների կազմեր է
պատրաստում, առաջադասմանը է կատարում:

զ) կամավորության սխտեմ է արժատացնում, ուսում-
նասիրում է աշխատանքի փորձը, կյանքում կիրառում է
գյուտարարական աշխատանքի նոր ձևերն ու մեթոդները:

է) ընտում է անդամության խնդրի շուրջը ծագող կոնֆ-
լիկտները, կանոնադրության խախտումները և այլ կազմա-
կերպչական հարցերը:

ը) տեղեկություններ է կազմում և տալիս բջիջի կազ-

մի ու աշխատանքի մասին, աշխատանքը լուսաբանում է ընկերութեան անդամների մասսայի առաջ:

Թ) յուրաքանչյուր անհատ գյուտարարին և հասցնում գյուտարարութեան վերաբերյալ վորոշումներն ու դիրեկտիվները և մշակման և յենթարկում այն:

Ճ) ստուգում է գյուտարարութեան վերաբերյալ վորոշումների կատարումը և ներգործութեան միջոցներ և ձեռք առնում աջակցի դիրեկտիվներն ու վորոշումներն իրագործելու համար: Ստուգում է գյուտարարական բջիջի բյուրոյի և ՄՏԿ-ի գյուտարարները վորոշումները:

Կ) մյուս բոլոր սեկտորների աշխատութեամբ կազմակերպում է լավագույն բջիջների հասարակական բուքսերը՝ հետ մնացողների նկատմամբ, ինչպես նաև սոցմրցում է ծավալում բջիջների միջև:

Ը) շեֆություն է կազմակերպում յենթաշեֆ տնտեսությունների գյուտարարական բջիջների վրա:

II. Պլանային-տնտեսական սեկտորը կատարում է հետևյալ աշխատանքը:

ա) կոնսրոլ և սահմանում, վոր կոլտնտկենտրոնի որդանները և ՄՏԿ-ների դիրեկցիան, ռացգյուտարչուրոնները, զոնալ լաբորատորիաները, փորձակայանները, փորձադաշտերը, եքսպերիմենտալ արհեստանոցները և այլն, ճիշտ հաշվի առնեն, ժամանակին քնեն և իրացնել տան կատարելագործումներն ու գյուտերը:

բ) գյուտարարների շեֆություն է կազմակերպում աճհնից ավելի արժեքավոր գյուտերի կիրառման վրա:

գ) հասարակական ներգործութեան միջոցներ և ձեռք առնում առաջարկների ձգձգման դեմ պայքարելու համար (կազմակերպում է ցուցադրական դատեր և այլն):

դ) կոնսրոլ և սահմանում, վորպեսզի պարզևատրումը ճիշտ կատարվի, տնտեսումից լինելիք հատկացումները ճիշտ արվեն և գյուտարարութեանն ու ռացիոնալացման աջակցութեան Փոնդերը ճիշտ ծախսվեն:

ե) քննում է ոլորդևատրման կամ գյուտի հեղինակությունը վորոշելու հողի վրա ծաղած կոնֆլիկտները:

զ) ռացգյուտարչուրոններին աջակցություն է ցույց տալիս եքսպերիմենտալ արհեստանոցներ, տեխնիկական կոնսուլ-

տացիաներ, փորձադաշտեր, փորձակայաններ կազմակերպելու գործում:

ե) կազմակերպում է գյուտարարական ստեղծագործութեան պլանավորման գործը (սոցպատվերներ, թեմաների ցանկեր):

ը) մասնակցում է հանդիսական արդֆինալանները և ՄՏԿ-ի բանվորների ու կոլտնտեսականների առաջարկների իրացման պլանները մշակելու գործին:

թ) կազմակերպում է ժամանակավոր գյուտարարական խմբեր՝ առանձին ազրոտեխնիկական տնտեսական առաջադրություններ մշակելու համար (պայքար յերաչտի դեմ, վորոգում, մեքենաների վերանորոգում և այլն):

ժ) կազմակերպում է տեխնիկական և ազրոտեխական դիտելիքների հիմնավորում պահանջող արժեքավոր ու բովանդակութեամբ բարդ առաջարկների կոլեկտիվ մշակումը:

ի) գյուտարարների և գյուտարարական խմբերի մրցություն է կազմակերպում՝ մեծագույն եֆեկտ տվող գյուտեր անելու և ալք ուղղութեամբ պարտավորություններ վերցնելու ուղղութեամբ յեռամայակի կամ տարեկան ժամկետներով:

III. Անգրոտեխնիկական պրոպագանդի և փորձի փոխանակման սեկտորը կատարում է հետևյալ աշխատանքը:

ա) փորձի փոխանակում է կազմակերպում «CO» կարտոտեկի միջոցով:

բ) կազմակերպում է գյուտարարական կարիներտներ, անկյուններ, ցուցահանդեսներ, արագըրական եքսկուրսիաներ դեպի փորձակայանը, խորհտնտեսությունը, ՄՏԿայանը, ինչպես նաև ընդունում է ուրիշ տնտեսություններից և գործարաններից յեկող եքսկուրսիաները:

գ) մասնակցում է ուսումնական-փորձառական խորհտնտեսությունների, հենակետային ՄՏԿ-ների, զոնալ կայանների, փորձադաշտերի ծրագրերի մշակմանը, նպատակ ունենալով այնտեղ մտցնել այնպիսի առարկաներ, վորոնք անհրաժեշտ են գյուտարարներին համար:

դ) գյուտարարներին ներգրավում է ազրոտեխնիկական ուսուցման ընդհանուր ցանցի մեջ, կազմակերպում է դժագրական խմբակների լրացուցիչ դասընթացներ, գոտտեխնիկական, տեխնիկական դասախոսություններ և այլն:

յ) խորհրդովն թերցարաններին կից կազմակերպում և տեղեկատու գրադարաններ՝ տեխնիկայի, դաշտաբուժության, անասնաբուժության և այլ հարցերի շուրջը:

զ) կազմակերպում և կոլտնտեսականների, ՄՏԳ բանվորների, ինժեներների, ագրոնոմների ուժերով պոպուլյար արտադրական, տեխնիկական, դաշտային և այլ տիպի դԱՐՔեր հեղինակելու գործը:

կ) կազմակերպում և գյուտարարական պատի թերթեր և պատի թերթերի գյուտարարական բաժիններ: Մասնակցում և բազմատիրաթ թերթերին, կազմակերպում և Վիգորեռատանը ժուրնալի բանթղթակիցների պոստեր:

ը) կազմակերպում և տեխնիկական ինֆորմացիաներ՝ երբ գյուտերի մասին:

թ) դուքս և գրում գրքեր և ակնառու պիտույքներ, կազմակերպում և քարճրաձայն ընթերցանութքուններ:

IV. ՄՏԿ-ի գյուտխորհրդի և կոլտնտեսութունների բջիջների գանձապահ գեկավարում և հավաքարներին: Նրա Փոնկեցիաների մեջ մտնում և հետևյալը:

ա) Հետևել, վորպեսզի կանոնավոր ստացվեն անդամակցական ու մուտքի վճարները, գյուտարարության և ուսցիտնարացման աջակցության Փոնդերից արվող կամավոր վճարումները, 10 տոկոսային հատկացումներից արվող 30 տոկոս հատկացումները:

բ) իր մոտ և կենտրոնացնում գրամական հաշվեհալությունը վարելու գործը:

գ) պահում և խորհրդի ընդր գումարները:

Հավաքարարները հողամասերում ընդունում են մուտքի, անդամակցական և կամավոր վճարները, տարածում են կրճքանշաններ, անդամատոմսեր, գրականություն և այլն, գրամական միջոցները հաշվատում են կառարում, հաշվեհալություն են ներկայացնում գյուտխորհրդի գանձապահին:

V. Խորհրդի վերստուգիչ հանձնաժողովն ընտրվում և խորհրդի հետ միասին: Բջիջի վերստուգիչ հանձնաժողովն ընտրվում և բջիջի բյուրոյի հետ միասին: Վերստուգիչ հանձնաժողովը վերահսկում և բջիջի միջոցների ճիշտ գանձման և ծախսման, տնտեսական - նյութական մասի դրու-

թյան, ընդր գումարները ճիշտ և ժամանակին ընկերության ֆոնդը մուծելու վրա:

Բ. Ընկերության խորհուրդները և բջիջները
խորհտնտեսություններում

1. Խորհտնտեսություններում ընկերության ղեկավար մարմինն և հանդիսանում ընկերության համախորհտնտեսական խորհուրդը, վոր ընտրվում և ընկերության անդամների համախորհտնտեսական կոնֆերենցիայում:

2. Խորհուրդն ընտրում և նախագահություն, վորի կազմից ընտրում և նախագահ, գանձապահ ու քարտուղար, և իր աշխատանքը ամսում և գյուտընկերության մարդային կամ չըջանային խորհրդի ընդհանուր ղեկավարության ներքո:

3. Յուրաքանչյուր հողամասում, ուր առնվազն ընկերության 10 անդամ կա, մշտական բանվորների կազմից կազմակերպվում են ընկերության հողամասային բջիջներ: Հողամասային բջիջի բյուրոն, 3-ից մինչև 7 հոգու կազմով, ընտրվում և ընկերության անդամների հողամասային ժողովում: Բյուրոն յնտրում և պատասխանատու քարտուղար և աշխատում և գյուտընկերության խորհտնտեսական խորհրդի և հողամասային բանկոմի անմիջական ղեկավարությամբ:

4. Խորհտնտեսական խորհուրդը և հողամասային բջիջներն իրենց ներքում կազմակերպում են աշխատանքի չորս բաժանմունք:

- 1) կազմ-հրահանգչական.
- 2) Պլանային-արտադրական.
- 3) Տեխնիկական ու ագրոնոմիական պրոպագանդի և փորձի փոխանակման.
- 4) Գանձապահ (իսկ խոշոր հողամասերում՝ նաև հավաքարարները խումբ):

I. Կազմ-հրահանգչական սեկտորը գրադվում և հետևյալ հարցերով:

ա) մերձակա կոլտնտեսությունների կոլտնտեսականներին, բանվորներին, ճարտարապետ-տեխնիկական աշխատողներին ներգրավել ընկերության անդամների շարքը, ձևակերպել անդամակցությունը, անկետաներ լցնել, անդամա-

տոմսեր բաժանել, յուրաքանչյուր անդամին ծանոթացնել
ընկերութեան կանոնադրութեան հետ .

բ) գլուտարարական բժիշկներ կազմակերպել ըստ խորհր-
տնտեսութեան հոգատմաների (վորտեղ վոր շկա) և նրանց
հրահանգավորել բոլոր կազմակերպչական հարցերի շուրջը .

գ) նախապատրաստել և հրավիրել խորհրդի ժողովները
և կոնֆերենցիաները .

դ) մինչև յուրաքանչյուր անհատ գլուտարարը հասցնել
գլուտարարութեան վերաբերյալ դիրեկտիվներն ու վորո-
շումները և մշակման յենթարկել այն .

յե) ուժերի հաշվառում և ճիշտ դասավորում կատա-
րել, գլուտարարներին առաջ քաշել դիտա-հետազոտական
աշխատանքի, ոսպելուր յուրոներում աշխատելու, տրակ-
տորիստների, կոմբայներների և այլ դասընթացներում սո-
վորելու .

զ) արմատացնել կամավորութեան սկզբունքը, ուսում-
նասիրել աշխատանքի փորձը, կիրառել գլուտարարական
աշխատանքի նոր ձևերն ու մեթոդները .

ե) քննել անդամութեան հարցերի շուրջը ծագող կոնֆ-
լիկտները, կանոնադրութեան խախտումները և այլ կազմա-
կերպչական հարցերը .

ը) կազմել և տալ տեղեկութուններ բժիշկ կազմի ու
աշխատանքի մասին, լուսաբանել աշխատանքը բանվորա-
կան լայն մասնայի առաջ .

թ) ստուգել գլուտարարութեան վերաբերյալ վորոշում-
ների կատարումը և ներդրութեան միջոցներ ձեռք առնել՝
գլուտարարութեան վերաբերյալ դիրեկտիվներն ու վորո-
շումներն իրագործելու համար, հասարակական կարծիք
կազմելով, ժողովներում, խորհրդակցութեաններում, մա-
մուլում, պատի թերթերում լուսաբանելով, ինչպես նաև
ստուգել բժիշկ բյուրոյի և խորհրտնտեսական խորհրդի վո-
րոշումները .

ժ) փորձի փոխանակման սեկտորի հետ միասին ընդունել
մյուս խորհրտնտեսութեաններին ու կոլտնտեսութեաններին
եջակութիւնները և նրանց ծանոթացնել վոր միայն արտա-
դրական հարցերի, այլև բժիշկ կազմակերպման և աշխա-
տանքի հետ .

ի) մյուս բոլոր սեկտորների աշխատակցութեամբ լայնա-

գործն բժիշկների հասարակական բուքսի կազմակերպել հետ
մնացածների նկատմամբ .

լ) գլուտարարական բժիշկների շեֆութեան կազմակեր-
պել յենթաշեֆ կոլտնտեսութեանների գլուտարարների վրա .
խ) սոցմըցում և հրավածախութեան կազմակերպել :

II. Պլանային-արտադրական սեկտորը կատարում և հե-
տևյալ աշխատանքը .

ա) կոնտրոլ և սահմանում, վոր ոսպելուր բժիշկների որ-
դանները, խորհրտնտեսութեանները, արհեստանոցները, փոր-
ձադաշտերը, դռնալ կայանները ճիշտ հաշիվ տանեն և ժա-
մանակին իրացնեն բանվորական առաջարկները .

բ) շեֆութեան և կազմակերպում ամենից ավելի ար-
ժեքավոր առաջարկներին վրա .

գ) հասարակական ներդրութեան միջոցներ և ձեռք
առնում և պայքարում և բանվորական առաջարկների ձեռ-
ձեռումների դեմ (ցուցադրական դատեր և այլն) .

դ) կոնտրոլ և սահմանում, վոր պարզևատրումը ճիշտ
կատարվի, ինչպես նաև գլուտարարութեան ու ոսպիտնա-
լացման աջակցութեան ֆոնդերը ճիշտ ծախսվեն և հատկա-
ցումները ժամանակին կատարվեն .

յե) քննում և անդամակցական հարցերի շուրջը ծագող
կոնֆլիկտները, կանոնադրութեան խախտումները և այլ
կազմակերպչական հարցերը .

զ) աջակցութեան և ցույց տալիս ոսպելուր բժիշկներին՝
եջակելիմենտալ արհեստանոցներ, ազրոտեխնիկական նոր-
մուծութեանների փորձադաշտեր կազմակերպելու գործում,
կատարում և մեքենաների փորձարկումները .

ե) բանվորական գլուտարարութեան պլանավորում և
կազմակերպում սոցիալիտական պատվերների միջոցով (ա-
ռաջարկների փոխառութեաններ և ետաֆետաներ) .

ը) մասնակցում և հանդիսական արդիիսպլանների և
բանվորական առաջարկների իրացման պլանների մշակման
գործին .

թ) կազմակերպում և գլուտարարների ժամանակավոր
խմբեր առանձին արտադրական-տեխնիկական առաջադրու-
թեաններին, ազրոտեխնիկական առաջադրութեաններին և նոր-
ժեռութեանների մշակման համար (պայքար ավարիաների,
պարտքեր, դեմ, վառելանյութի խնայողու-

թյուն, պայքար յերաշտի դեմ, վերջնական մշակման կարող
և առանձնապես արժեքավոր առաջարկների կոչեկալով մշա-
կում, ինչպես նաև նրանց տեխնիկական ձևակերպում:

ժ) կազմակերպում և արտադրական խորհրդակցություն-
ների աշխատանքի ոգտագործումը և կիրառում և գյուտա-
րարների մեջ աշխատանք տանելու նոր ձևեր:

ի) կազմակերպում և սոցմրցում և հարվածայնություն:
III. Ազրոտեխնիկական պրոպագանդի և փորձի փոխա-
նակման սեկտորը կատարում և հետևյալ աշխատանքը:

ա) փորձի փոխանակում և կազմակերպում «CO» կար-
տոտեկի միջոցով, կազմակերպում և եքսկուրսիաներ և կոն-
սուլտացիաներ:

բ) կազմակերպում և արտադրական կաբինետներ, ան-
կյուններ, ցուցաճանդեսներ, արտադրական եքսկուրսիաներ,
փորձի փոխանակման խորհրդակցություններ, ինչպես նաև
կազմակերպում և մյուս խորհանտեսությունների, կոլտեսե-
սությունների, ՄՏԿ-ների և գործարանների եքսկուրսիաներն
ընդունելու գործը:

գ) մասնակցում և խորհանտեսությունների ուսումնական
կաբինետների և խորհանտեսական ԲՈՒՀ-երի, խորհանտեսու-
ների, փորձակաշանների և հետևյալների ծրագրերի մշակ-
մանը՝ աջակցելու գյուտարարներին անհրաժեշտ առարկաներ
մտցնելու համար:

դ) Գյուտարարներին ներգրավում և տեխուսուցման ընդ-
հանուր ցանցի մեջ, կազմակերպում և լրացուցիչ դասըն-
թացներ (գծագրական-կոնստրուկտորական, գիտա-հետա-
զոտական և այլն), դասախոսություններ, արտադրության
առանձին պրոցեսներն ուսումնասիրող խմբեր և խմբակներ:

ի) կազմակերպում և տեղեկատու-տեխնիկական, ազրո-
տարական գրադարաններ:

զ) Բանվոր գյուտարարների ուժերով կազմում և պոպու-
լյար ազրոտեխնիկական գրականություն:

և) Նյութեր և գետեղում պատի թերթերի գյուտարարա-
կան բաժնում, արտադրական-տեխնիկական թերթիկներում,
բազմատիրաթ թերթերում, ինչպես նաև ոգտագործում և
մամուլի մյուս տեսակները (բանթիթակցական պոստեր և
այլն):

ը) «Տեխնաս» խմբակի բոլոր անդամներին՝ մտցնում և
գյուտարարների ընկերության մեջ, վորտեղ չկա՝ կազմա-

կերպում է: Գյուտարարին տեխնիկական ոգնություն և ցույց
տալիս առաջարկները ձևակերպելու և բարելավելու գոր-
ծում:

IV. Խորհրդի գանձապահն իր մասն և կենտրոնացնում
դրամական հաշվետվությունը վարելու գործը և պահում և
բլիթի բոլոր գումարները:

Խորհրդի գանձապահը անդամավճար հավաքողների խմ-
բեր և կազմակերպում առանձին հողամասերում, ղեկավա-
րում և նրանց: Գանձապահը կոնտրոլ և սահմանում անդա-
մավճարների և մուտքի վճարների գանձման, 10 տոկոսային
հատկացումներին 30 տոկոսի և այլ միջոցների գանձման վրա,
խորհրդին ղեկուցում և դրամարկղի դրուժյան մասին, կոնտ-
րոլ և սահմանում հողամասային բլիթներում միջոցների հա-
վաքման վրա:

V. Խորհանտեսական խորհուրդներում կազմակերպում
են վերատուգելի հանձնաժողովներ, վորոնք ընտրվում են ըն-
կերության համարխորհանտեսական կոնֆերենցիաներում:

Հողամասերի հավաքարարներն ընդունում են անդամակ-
ցական վճարները, տնտեսման 10 տոկոսային հատկացում-
ներին 30 տոկոսը, կամավոր վճարումներ, տարածում են
կրճքանշանները, անդամատոմսերը, գրահանուժյուն և այլն,
կատարում են դրամական միջոցների հաշվառում:

Վերստուգելի հանձնաժողովները և մշտական և անսպա-
սելի ռեվիզիաների միջոցով կոնտրոլ են սահմանում, վոր
ճիշտ գանձվեն և ծախսվեն խորհրդի ու բլիթների մի-
ջոցները, կոնտրոլ և սահմանում բլիթները ու խոր-
հրդի տնտեսական-նյութական մասի դրուժյան և գյուտա-
րարության ու ռացիոնալացման աջակցության ֆոնդերի ճիշտ
հատկացումների վրա:

Մանրություն. — Հանձնարարվում և բլիթների
բյուրոների անդամների թիվը սահմանելու հետև-
յալ սկզբունքի:

Մինչև 15	անդամ	—	Բյուրոյի	3 անդամ
„ 15—30	„	—	„	3—5 „
„ 30—100	„	—	„	7—9 „
„ 100-ից ավելի	—	—	„	11—13 „

ԽՈՐՀՈՒՐԴԻ ԿԱԶՄԸ.

100 անդամ լինելու դեպքում— 15 խորհրդի անդամ
200 " " " —19—21 " "
200-ից ավելի " " — չուրաքանչյուր 100 հոգուն
լրացուցիչ 2 անդամ:

Գյուլ. Ընկ. Կենտր. Խորհրդի փոխ-նախագահ՝ ՊԵՏՈՒԽՈՎ.

Գյուլգեսեկատորի վարիչ՝ ՏՐՈՒՏԿԻՆ

ԱՐԴՅԻՆՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՅԵՎ ԳԵՐԱԿԱՏԱՐՄԱՆ
ՀԱՍՄՈՒՆՔՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՅԵՎ ԳՅՈՒՏԵՐԸ,
ՏԵՆԵԻՔԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ
ՌԱՅԻՆԻԼԱՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՖՈՆԴԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Ը ն դ հ ա ն ու ը ր օ կ զ ք ու ն ք ն ե ր

1. Այս կանոնադրութեամբ կազմվում են՝
Փոնդեր՝ սոցմրցման և հարվածայնութեան հիման վրա հասմունքները պարզեացնելու համար.

բ) Փոնդեր՝ գյուտարարութեան և օպերատիվ աշխատանքի համար.

2. Սոցմրցման և հարվածայնութեան հիման վրա հասմունքները պարզեացնելու Փոնդերից պարզե տրվում է պլանային առաջադրութեանը (քանակական և վորակային) գերակատարելու, պլանի կատարման ակնազարտ հասմունքների, վթարը, պայթյունը, մեքենայի վնասումը և այլն նախադրուչացնելու ժամանակ ցուցահանած ինքնուրացութեան և հերոսութեան համար, ինչպես նաև աշխատանքի բարելավման ու ետանցման և վարչական ասպարատի ստրուկտուրայի պարզեցման նպատող ընդունած առաջարկութեանը համար:

Գիտական - հետազոտական հիմնարկութեանը, բարձրագույն ուսումնական հաստատութեանը և տեխնիկումներում այդ Փոնդից պարզե է տրվում նույնպես ասպիրանտներին և ուսանողներին՝ օրինակելի ուսումնական աշխատանքի և հատուկ հասմունքների համար:

3. Սոցմրցման և հարվածայնութեան հիման վրա հասմունքները պարզեացնելու Փոնդից պարզե տրվում է առանձին բանվորներին, ինժեներատեխնիքական և վարչա-

անտեսական կազմի անձանց և այլ ծառայողներին, ինչպես նաև բրիգադներին, հերթափոխերին, ցեխերին, բաժիններին և այլն:

4. Պարզևատրույթյունն ի հաշիվ Փոնդի կատարվում է ինչպես դրամով, նույնպես և բնաբերքով, ԽՍՀ Միություն և արտասահման գործուղվումներով, լրացուցիչ արձակուրդներով, սանատորիաներում և հանգստի տներում տեղ հատկացնելով:

5. Պարզևատրվող անձանց թեկնածույթյուններն առաջարկվում են վարչության և Փարզարժույթի արտադրական խորհրդակցության կողմից և վերջնականապես հաստատում են նրանք՝ բանվորների և ծառայողների ժողովների քննությունից հետո:

Ձեռնարկույթյունների և հիմնարկույթյունների ղեկավարները տվյալ ձեռնարկույթյան կամ հիմնարկույթյան կից Փոնդից չեն պարզևատրվում: Նրանք կարող են պարզևատրվել վերադաս մարմիններին կից յեղած Փոնդերից:

6. Գյուտարարության և ոսցիոնալացման աջակցելու Փոնդերը ծախսում են.

ա) իրագործման ընդունված գյուտերի վարձատրման, տեխնիքական կատարելագործությունների և ոսցիոնալիզատորական առաջարկույթյունների վրա.

բ) գյուտերի, տեխնիքական կատարելագործությունների և ոսցիոնալիզատորական առաջարկույթյունների մրցանակներ կազմակերպելու և մրցանակային պարգևներ տալու վրա.

գ) տեխնիքական-անտեսական մշակման մոդելներ, նմուշներ պատրաստելու և գյուտերի, կատարելագործությունների ու ոսցիոնալիզատորական առաջարկույթյունների փորձարկման, նոյն թվում փորձնական բազաների պահպանման վրա.

Ձեռնարկույթյուններում դյուտարարության և ոսցիոնալացման աջակցելու Փոնդերից, բացի դրանից, 10 տոկոսը մասնատրվում է գյուտարարների ընկերության անդրինություններ:

7. Գյուտարարության և ոսցիոնալացման աջակցելու Փոնդերը ծախսվում են.

ա) ձեռնարկույթյուններում—վարչությունը.
բ) միավորություններում, տրեստներում, ժողովրդական կոմիսարիատներում և նրանց տեղական մարմիններում—գյուտարարության համապատասխան մարմինները:

Յեթն դյուտարարության և ոսցիոնալացման համար գյուտյուն ունեն տարբեր մարմիններ, այս ժողովրդական կոմիսարիատի կամ նրա տեղական մարմնի կարգադրությամբ Փոնդերի ծախսումը կարող է տրվել գյուտարարության և ոսցիոնալացման մարմիններին՝ ըստ պատկանելույն.

Վարձատրույթյուն տալու (հ-րդ հոդ. «ա» կ.) չափը և կարգը վորոշվում է Աշխատանքի և Պաշտպանության նորհրդին կից Գյուտարարության կոմիտեյի հրահանգներով:

8. Վարձատրույթյուն ստացողի համաձայնությամբ վարձատրության փոխարեն նրան ի հաշիվ Փոնդի կարելի չէ տեղ հատկացնել սանատորիայում կամ հանգստի տան մեջ, լրացուցիչ արձակուրդ և դիֆիցիտային ապրանք տալ:

II. Փոնդերը՝ ձեռնարկույթյուններում

9. Պետական արդյունաբերության, տրանսպորտի, առևտրի, կապի, կամուկալ տնտեսության բոլոր հիմնարկություններում, սովխոզներում, մեքենատրակտորային կայաններում, շինարարություններում, ինչպես նաև սպասողական և արհեստագործական կուպերացիայի ձեռնարկություններում կազմվում է պարգևատրման յերկու ինֆուրույն ֆոնդ.

ա) սացմրցման և հարվածայնության հիման վրա արգ-ֆինսյանը կատարելու և գերակատարելու հասմունքները պարգևատրելու ֆոնդ և

բ) գյուտարարության և ոսցիոնալացման աջակցելու ֆոնդ:

Հաղորդակցության ճանապարհների ժողովրդական կոմիսարիատը, Զրային տրանսպորտի ժողովրդական կոմիսարիատը, Խճուղիների ու գեանուղիների և ավտոմոբիլային տրանսպորտի կենտրոնական վարչությունը, Գաղափարական ողային նախատորի համամիութենական միավոր-

բությունը, Փոստերի և հեռագրամների ժողովրդական կոմիտեայի համար, ՍՍՀ Միության Մատակարարման ժողովրդական կոմիտեայի համար, Ֆենտրոստյուզը և Վսեկոպրոմոտիվները, համաձայնության դաշույն Արհեստակցական միությունների համամիութենական կենտրոնական խորհրդի հետ, վորոշում են թե տրանսպորտի, կապի, ողջային նախապրոմի, պետական առևտրի, սոցալոգիական և արհեստագործական կոպպերացիայի վոր մարմիններին կից կազմվում են Փոնդեր, համապատասխան արդյունաբերության ձեռնարկություններում գոյություն ունեցող Փոնդերի:

10. Արդֆինսկանը կատարելու և գերակատարելու հասմունքները պարզեկատարելու Փոնդերը կազմում են ձեռնարկության համար սահմանված աշխատավարձի տարեկան գումարի 1/2 տոկոսի չափով:

Այդ չափով չաբաքանչյուր տարվա սկզբին Փոնդ և կազմվում և անտեսավարական տարվա ընթացքում ծածկվում և ի հաշիվ այն ինսյոդության, վորն ստացվում և սոցմրքման և պլանի գերակատարման հետևանքով:

Յեթե տարվա վերջին այդ Փոնդը ծախսված է, իսկ ձեռնարկության մեջ՝ Փոնդը ծածկելով հանդերձ, ինսյոդություն և մնում, ապա այդ մնացածի 10 տոկոսը լրացուցիչ կեբալով տրվում և արդֆինսկանի գերակատարմանը նպաստող գործավորների պարզեկատարության Փոնդին:

11. Պարզեկատարման չափը և ձևը վորոշում և վարչությունը: Պարզեկատարությունը կատարվում և ըստ ընդհանուր կանոնի յեռամսյակներով:

12. Գյուտարարության և ոսցինսկայացման աշակցելու փոնդը կազմվում է սվյայ ձեռնարկությունների մեջ յուրաքանչյուր գյուտի, տեխնիկական կատարելագործության և ոսցինսկայի գատարական առաջարկության կիրառման առաջին տարում հաշվված ինսյոդության 50 տոկոսի չափով:

Ինք բացվող ձեռնարկություններում այդ փոնդը կազմվում է սվյայ ձեռնարկության հոսքը սահմանված տարեկան աշխատավարձի գումարի 1/4 տոկոսի չափով և այնուրից գյուտների, կատարելագործությունների և ոսցինսկայի գատարական առաջարկությունների կիրառումից առաջված ինսյոդության:

13. Յեթե Փոնդը ծախսված է և միտամանակ կան այն-

պիսի դյուտեր, տեխնիքական կատարելագործություններ և ոսցինսկայի գատարական առաջարկություններ, վորոնք ծախս են պահանջում ի հաշիվ Փոնդի, այն ժամանակ այդ ծախսերը թույլատրվում են ի հաշիվ չըջանառական միջոցների՝ հետագայում հատուցելով ի հաշիվ Փոնդի հետագա մուծանքների ծախսված գումարները:

Յեթե Փոնդը տարվա վերջին չի ծախսված, ապա մնացորդը վերահաշվվում է հաջորդ տարվան:

14. Փոնդը ծախսում է ձեռնարկության վարչությունը: Ի հաշիվ Փոնդի վարձատրությունը տրվում է՝ պահպանելով դյուտերի և տեխնիքական կատարելագործությունների կանոնադրության 87-90 հոդվածները և Ալխատանքի ու Պաշտպանության խորհրդին կից դյուտարարության կոմիտեայի հրահանգները:

III. Փոնդերը միավորություններում ու տրեստներում.

15. Միավորությունների մեջ չմտնող միավորություններում և տրեստներում կազմվում են հետևյալ Փոնդերը.

ա) դյուտարարությանն ու ոսցինսկայացմանը ոժանդակելու Փոնդ.

բ) ձեռնարկությունների դեկավարող անձնակազմը պարզեկատարելու Փոնդ:

16. Միավորությունների մեջ չմտնող միավորություններում և տրեստներում գյուտարարությանն ու ոսցինսկայացմանը ոժանդակող փոնդերը կազմվում են.

ա) ի հաշիվ հատուկ ապիգնումների, վարմի մտցվում են միավորումների և տրեստների արդֆինսկայանների մեջ:

բ) ի հաշիվ սվյայ միավորության կամ տրեստի կազմի մեջ մտնող ձեռնարկություններում գյուտարարությանն ու ոսցինսկայացմանն ոժանդակող փոնդերից 10 տոկոսի չափով կատարվող մասնատրությունների:

Հատորգակցության ձանապարհների ժողովրդական կոմիտեայի համար, ՍՍՀ Միության խճուղիների և դեանուզիների և ավտոմոբիլային տրանսպորտի կենտրոնական վարչությունը, Փոստերի և հեռագրատների ժողովրդական կոմիտեայի համար, ցենտրոպոյուզը և Վսեկոպրոմոտիվները, Արհեստակցական միությունների համամիութենական կենտրոնական խորհրդի համաձայնությամբ վորոշում են թե փոխարու-

Քյան և կապի, սպառողական և արհեստագործական կո-
ոպերացիայի հատկապես ինչ մարմիններում են կազմվում
Փոնդերը, վորոնք համապատասխանում են արդյունաբերու-
թյան միավորություններին և տրեստներին կից Փոնդերին:

17. Համապատասխան գերատեսչության վորոշումով
գյուտարարության ու ռացիոնալացման ոժանդակող Փոն-
դերը կարող են կազմվել նաև միավորությունների մեջ մըտ-
նող տրեստներում: Այդ դեպքում գերատեսչությունը հա-
մապատասխան արհեստակցական միության համաձայնու-
թյամբ, սահմանում է 16 հոդ. մատնանշված գումարների
բաշխումը միավորությունների և տրեստների միջև:

18. Զեռնարկությունների ղեկավարող անձնակազմը
պարզևատրելու Փոնդերը կազմվում են ավյալ միավորու-
թյան կամ տրեստի կազմի մեջ մտնող հիմնարկություննե-
րում արդֆինալանը կատարելու և գերակատարելու հաս-
մունքները պարզևատրելու Փոնդերից արվող վեց տոկո-
սյան մասնատրությունից:

Այս Փոնդից մասնատրությունները ձեռնարկություն-
ների գիրեկտորներին և նրանց ռգնականներին տալիս է միա-
վորության կամ տրեստի վարչությունը:

Նույն այդ Փոնդից այդ նույն կարգով պարզևատրվում
է միավորության կամ տրեստի իրավասության տակ գըտ-
նվող գիտական-հետազոտական և սոցիալ-կուլտուրական
հիմնարկությունների ղեկավարող անձնակազմը:

IV. Փ ո ն դ ե ռ ը տ ն տ ե ս ա վ ա ր ա կ ա ն
դ ե ռ ա տ ե ս չ ու թ յ ու ը ն ն ե ռ ու մ , կ ո ո-
ս Է ր ա տ ի վ կ ե ն ա ր ո ն ն ե ռ ու մ և ն ր ա ն ց
տ ե ղ ա կ ա ն մ ա ր մ ի ն ն ե ռ ու մ

19. ՍՍՀ Միության և դաշնակից հանրապետություննե-
րի այն գերատեսչություններում, վորոնք իրենց իրավասու-
թյան տակ ունեն Գ-րդ հոդ. մատնանշված ձեռնարկու-
թյունները, և նրանց տեղական մարմիններում (բացի ռայո-
նականներից) կազմվում են.

ա) ձեռնարկությունները պարզևատրելու Փոնդեր.

բ) գյուտարարությանն ու ռացիոնալացմանը ոժանդա-
կող Փոնդեր:

Նույնպիսի Փոնդեր կազմվում են Յենտրոտոյուզում և

Վսեկրոպրոմսովետում և սպառողական ու արհեստագործա-
կան կոոպերացիայի հանրապետական, յերկրային և մար-
զային միություններում:

Մանրություն. — Առանձին դեպքերում, գերա-
տեսչության և արհեստակցական միությունների հա-
մամիութենական կենտրոնական խորհրդի կամ ար-
հեստակցական միությունների հանրապետական խոր-
հրդի համաձայնությամբ ըստ պատկանելույն արդ-
ֆինալանը գերակատարելու պարզևատրման ֆոնդե-
րը կարող են կազմվել միավորությունների մեջ:

20. Արդֆինալանը կատարելու և գերակատարելու հաս-
մունքները համար ձեռնարկություններին պարզևատրելու
Փոնդերը կազմվում են ի հաշիվ մասնատրությունների այն
միջոցների ընդհանուր գումարի 10 տոկոսի չափով, վորոնք
ուղղվում են ժողովրդական կոմիսարիատի կամ նրա տե-
ղական մարմնի իրավասության տակ գտնվող ձեռնարկու-
թյունների բնակարանային և կուլտուր-կենցաղային ձեռ-
նարկությանը:

21. Արդֆինալանը գերակատարելու համար լավագույն
ձեռնարկություններին, ինչպես և արդֆինալանի քանակա-
կան և վորակական առաջագորությունների կատարման նշա-
նակալից համունքների համար պարզևատրությունը կա-
տարվում է ժողովրդական կոմիսարիատի կամ նրա տեղա-
կան մարմնի վորոշումով՝ ընդունված արհեստակցական
միությունների համամիութենական կենտրոնական խորհր-
դի, արհեստակցական միությունների հանրապետական կամ
տեղական խորհրդի հետ միասին, կամ համապատասխան
պրոֆմիության հետ՝ ըստ պատկանելության:

Զեռնարկությունները պարզևատրվում են ավյալ ձեռ-
նարկության համար բնակարանային և կուլտուր-կենցաղա-
յին շինարարությանը լրացուցիչ ասիդնումների միջոցով:

Մանրություն. — Յեթե ձեռնարկությունների
պարզևատրման Փոնդերը կազմվում են միավորու-
թյուններում (19 հոդ. մասնութություն), այսպ նրանց
կազմելու ազբյուր ծառայում են այն միջոցների ընդ-
հանուր գումարից արվող 10-տոկոսյա մասնատրու-
թյունները, վորոնք ուղղված են միավորության կազ-
մում մտնող ձեռնարկությունների բնակարանային և

կոյտուր-կենցաղային շինարարութեանը: Ձեռնարկու-
թյունները պարզեատրվում են միավորութեան վար-
չութեան վորոշումով, վորն ընդունվում է համապա-
տասխան արհեստակցական միութեան հետ միասին:

22. Գյուտարարութեանն ու ռացիոնալացման ոժանդա-
կելու ֆոնդերը զերատեսչություններում և նրանց տեղական
մարմիններում կազմվում են այն դեպքերում, յերբ գերատես-
չությունը նպատակահարմար է գտնում աշխարհի ֆոնդեր
կազմել միավորությունների և տրեստների մեջ յեղած ֆոն-
դերի հետ միասնամասնի:

23. Գերատեսչություններում և նրանց տեղական մար-
մարմիններում ֆոնդերը կազմվում են ի հաշիվ նախահաշիվ-
ների հատուկ ասիդնումների մասնատրությունների և տվյալ
մարմնի իրավասութեան տակ գտնվող միավորությունների
ու տրեստների գյուտարարութեանն ու ռացիոնալացմանը ո-
ժանդակելու ֆոնդերից արվող տաս-տոկոսյա մասնատրու-
թյուններից:

24. Ֆոնդերը ձեռնարկություններում, միավորություն-
ներում և տրեստներում, ինչպես և գերատեսչություններում
և նրանց տեղական մարմիններում կազմվում են անկախ այն
գումարներից վորոնք բաց են թողնվում աշխատավարձի
ֆոնդի վերաբերյալ գտնազան տեսակի իրախոտական վար-
ձատրությունների համար:

Մ. Ֆոնդերը սոցիալ-ուղղակա-
ն և գիտա-հետազոտակա-
ն հիմնա-
կություններում

25. Լուսավորութեան, առողջապահութեան ժողովրդա-
կան կոմիսարիատները և ուրիշ կենտրոնական և տեղական
որգանները (բացի ռացիոնալացմանից), վորոնց իրավասու-
թեան տակ գտնվում են դիտական-հետազոտական և սոցիալ-
կուլտուրական հիմնարկությունները (կրթական հաստատու-
թյունները, հիվանդանոցները և այլն) — այդ հիմնարկու-
թյունների զործավորներին պարզեատրելու համար կազմում
են յերկու ֆոնդ.

ա) սոցիալիստական մրցման և հարվածայնութեան հի-
ման վրա ձեռք բերված համունընները պարզեատրելու ֆոնդ.
բ) դյուտարարութեան և ռացիոնալացման ոժանդակե-
լու ֆոնդ:

Յերկու ֆոնդերի փոխարեն կարող է կազմվել մեկ ֆոնդ,
վորից պարզեներ տրվում են ինչպես դյուտի, տեխնիքական
կատարելագործութեան և ռացիոնալացման առաջար-
կութեան համար, նույնպես և որինակելի աշխատանքի և հա-
տուկ համունընների համար սոցիալիստական մրցման և
հարվածայնութեան հիման վրա:

26. Այն դեպքերում յերբ սոցիալ-կուլտուրական և դիտա-
հետազոտական հիմնարկությունները գտնվում են տեսեսա-
վարական սկզբունքներով գործող միավորությունների,
տրեստների և ուրիշ մարմինների իրավասութեան տակ, սո-
ցիալիստական մրցման և հարվածայնութեան հիման վրա
ձեռք բերվող համունընները պարզեատրելու ֆոնդերը կազ-
մվում են այդ տնտեսավարական մարմիններին կից:

Սոցիալ-կուլտուրական և դիտական-հետազոտական հիմ-
նարկությունները զործավորների արած գյուտների և տեխնի-
քական կատարելագործությունների վարձատրման և գյու-
տարարութեանն ոժանդակելու ծախսերը կատարվում են այն
բնդհանուր ֆոնդից, վոր գյություն ունի տնտեսավարական
մարմնին կից:

27. Սոցիալիստական մրցման և հարվածայնութեան հի-
ման վրա ձեռք բերվող համունընները պարզեատրելու ֆոն-
դերը կարող են կազմվել իրենց իսկ սոցիալ-կուլտուրական
և գիտական-հետազոտական հիմնարկություններում: Թե
այդ հիմնարկություններից վորոնց մեջ են կազմվում պար-
զեատրման ինքնուրու ֆոնդերը, — պատշաճ արհեստակցա-
կան կազմակերպութեան հետ միասին վորոշում է այն մար-
մինը, վորին այդ հիմնարկությունները յենթակա յեն:

28. Սոցիալիստական մրցման և հարվածայնութեան հի-
ման վրա ձեռք բերվող համունընները պարզեատրելու ֆոն-
դերը գերատեսչություններում և նրանց տեղական մարմին-
ներում, իսկ պատշաճ դեպքերում և իրենց իսկ գիտական-
հետազոտական և սոցիալ-կուլտուրական հիմնարկություն-
ներում (25 և 27 հոդ. հոդ.) կազմվում են ի հաշիվ հատուկ
նախահաշիվային ասիդնումների: Տնտեսավարական մարմին-
ներում այդ ֆոնդերը կազմվում են ի հաշիվ արդիինալանի
մեջ մտնող ասիդնումների: Պարզեները չափն ու տեսակը
վորոշում է վարչությունը՝ արհեստակցական կազմակեր-
պութեան հետ միասին:

29. Գյուտարարութեանն ու ռացիոնալացմանն ռոմանդա-
կելու Ֆոնդերը կազմվում են ի հաշիվ հատուկ ասիզներու-
նեքի՝ համապատասխան կենտրոնական և տեղական մար-
մինների նախահաշիվներով:

Բացի դրանից, այդ Ֆոնդերը լրացվում են տվյալ մարմ-
նին յնթակա հիմնարկութուններում ռացիոնալիզատորա-
կան առաջարկութեան կիրառման առաջին տարվա ընթաց-
քում նկատառված խնայողութեան գումարի 50 տոկոսի մաս-
նատրութեան չափով:

Գնետրոնական և տեղական այն մարմիններում, ուր
կազմվում են 22 հոդ. նախատեսված Ֆոնդերը, սոցիալ-
կուլտուրական և դիտական-հետադոտական հիմնարկու-
թյունների գործավորները պարզևատրվում են այդ նույն
Ֆոնդերից: Այդ Ֆոնդերի մեջ են մտնում այս հոդվածում
մասնանշված խնայողությունից ստացվող մասնատրու-
թյունները:

**VI. Ֆոնդերը կառավարչական ապարատին
ընդհանուր և վարկային հիմնարկություններում**

30. Կառավարչական բնույթի պետական հիմնարկու-
թյուններում (նույն թիվում և միավորությունների և տրեստ-
ների վարչություններում) և վարկային հիմնարկություն-
ներում կազմվում է պարզևատրման Ֆոնդ՝ սոցմրցման ու
հարվածաչնութեան հիման վրա այդ հիմնարկությունների
գործավորների ձեռք բերած հասմունքների և հիմնարկու-
թյան աշխատանքը բարելավելու վերաբերյալ ռացիոնալի-
զատորական առաջարկությունների պարզևատրման հա-
մար:

Պարզևատրման Ֆոնդը կազմվում է ի հաշիվ հատուկ
ասիզներումների, վորոնք նախատեսված են հաաապատասխան
հիմնարկութեան նախահաշիվով տվյալ հիմնարկութեան հա-
մար, սահմանվում է աշխատավարձի տարեկան Ֆոնդի $\frac{1}{4}$
տոկոսի չափով:

Ֆոնդն այդ չափով կազմվում է տարվա սկզբին: Բացի
դրանից, այդ Ֆոնդին է անցնում խնայողութեան 50 տոկո-
սը, վորն ստացվում է սոցմրցման, հարվածաչնութեան և
ռացիոնալիզատորական միջոցառումներն իրականացնելու
հետևանքով:

31. Կառավարչական բնույթի հիմնարկություններում
վերադաս մարմնին կից գտնվող Ֆոնդից կարող է պարզև-
ատրվել ստորադաս մարմինների ամբողջ կորկտիվը կամ
առանձին գործավորները: Այս նպատակով անհրաժեշտու-
թյան դեպքում Ֆոնդը կարող է լրացվել նախահաշիվի այլ
ստորաբաժանումներից վարկեր տեղափոխելու միջոցով:

32. Պարզևատրման չափն ու ձևը վորոշում է վարչու-
թյունը, տեղկոմի հետ միասին:

33. ԽՍՀ Միութեան Յնտրոսոյուզը և վսեկուպրոմսո-
վեար՝ Արհեստակցական միությունների համամիութենա-
կան կենտրոնական խորհրդի համաձայնութեամբ վորոշում
են, թե սպասողական ու արհեստագործական կոոպերացիա-
յի ինչ կազմակերպություններին կից Ֆոնդեր են կազմում՝
այդ հիմնարկությունների կառավարչական ապարատի գոր-
ծավորներին պարզևատրելու համար:

**VII. Պարզևատրման բնդիանուր ֆուդերը ռայոնական
գործադիր կոմիտեներում**

34. Խայոնական գործադիր կոմիտեներին կից ռայոնա-
կան և գյուղական գործավորներին պարզևատրելու համար,
ի հաշիվ ռայոնական բյուջեյի վերաբերյալ հատուկ ասի-
զումների, կամվում է պարզևատրման միասնական Ֆոնդ
այն կարգով, վոր սահմանված է դաշնակից հանրապետու-
թյունների որոնադրութեամբ:

Այս Ֆոնդը ծախսվում է ռայոնական գործադիր կոմի-
տեյի վորոշումներով՝ ռայոնական և գյուղական նշանակու-
թյան հիմնարկություններում և ձեռնարկություններում
դրացված գործավորներին, որինակելի աշխատանքը և սոց-
մրցման ու հարվածաչնութեան հիման վրա հատուկ հաս-
մունքների, ինչպես և գյուտարարութեան, տեխնիկական
կատարելագործութեան և սոցիոնալիզատորական առաջար-
կությունների պարզևատրման համար:

Այդ նույն Ֆոնդից են պարզևատրվում ռայոնական ձեռ-
նարկություններն ու հիմնարկություններն ամբողջութեամբ:

- ԽՍՀ Միութեան ԿԳԿ նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ
- ԽՍՀՄ ԺԿԿ նախագահ՝ Վ. ՄՈՒՈՏՈՎ (ՍԿԹՅԱԲԻՆ)
- ԽՍՀ Միութեան ԿԳԿ քարտուգար՝ Ա. ՅԵՆՈՒԿԻՉԵ

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՈՐՀՐԴԻՆ
ԱՌԼՆԹԵՐ ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵՅԻՆ՝

Գյուտերի, տեխնիկական և կազմակերպչական կառու-
րելագործումների համար վարձատրութեան տարու մասին:

1. Գյուտերի համար վարձատրութեան տրվում է հեղի-
նակի վկայական ստացած գյուտարարներին այն դեպքում,
չեբբ նրանց գյուտերը կՍՀՄ Ժողովրդական անտեսութեան
համար (նույն թվում և սոցիալ-կուլտուրական նպատակ-
ները, յերկրի պաշտպանութեան համար և այլն) պիտանի յեն
ճանաչված:

Տեխնիկական կառուցելագործումներ են համարվում և
վարձատրվում են այն առաջարկները, վորոնց վերաբերյալ
հեղինակի վկայական չի ստացված և վորոնք տեխնիկական-
կանատրուկտիվ բնույթ ունեն կամ փոփոխում են արտա-
դրութեան տեխնոլոգիական պրոցեսները:

Կազմակերպչական կառուցելագործումներ են համար-
վում և վարձատրվում են մնացած բոլոր պիտանի առա-
ջարկները, վորոնք ընդունված են իրագործելու համար:

Ծանոթութեան 1.— Այն դեպքերում, յերբ գյու-
տը պիտանի է ճանաչվում մինչև հեղինակի վկայա-
կան տարու հարցի լուծումը, վարձատրութեան տրե-
վում է վորպես տեխնիկական կառուցելագործումի
համար և հետագայում հեղինակի վկայական ստա-
նալուց հետո, համապատասխան հաշվարկ և կատար-
վում:

Ծանոթութեան 2.— Այն դեպքում, յերբ արդեն
իսկ տրված հեղինակի վկայականը վերացվում է
գյուտը նոր շինելու պատճառով, վարձատրութեան
հաշվարկ և կատարվում և վարձատրութեանը վորոչ-

վում և վորպես տեխնիկական կառուցելագործումի
համար տրվելիք: Սակայն ի հաշիվ վարձատրութեան
վճարված գումարները հետ չեն վերադարձվում:

2. Վարձատրութեան տրվում է այն առաջարկների հա-
մար (գյուտեր, տեխնիկական և կազմակերպչական կառու-
րելագործումներ), վորոնց հիմնական եֆեկտը անտեսա-
կան ինդերի մեջ և արտահայտվում, տրվում է տարեկան
անտեսումից յեխնիկով, ըստ չկարանների (հոդ. 6, 7, 8):

Ըստ վորում տեխնիկական և կազմակերպչական կա-
տարելագործումները նկատմամբ տարեկան անտեսում և հա-
մարվում առաջարկն առաջին տարում գործադրելուց ստաց-
ված անտեսումը: Իսկ գյուտերը նկատմամբ տարեկան
անտեսում է համարվում գյուտի գործադրութեան առաջին
3 տարիներից այն տարվա տված անտեսումը, վորի ըն-
թացքում գյուտն ամենից շատ է գործադրված յեղել:

3. Առաջին տարվա տարեկան անտեսում և համարվում
ավյալ գյուտի, տեխնիկական կամ կազմակերպչական կա-
տարելագործումի գործադրումից առաջին 12 ամսվա ընթաց-
քում ստացված անտեսումը:

Այն դեպքում, յերբ առաջարկը գործադրվել է տարվա
մեջ, յենթադրյալ անտեսումը (հոդ. 14) հաշվում է տար-
վա մնացած մասի համար՝ տվյալ տարվա արտադրական
ծրագրով, իսկ հետագա տարվա մինչև 1 ամիսը պակաս
մասը՝ հետագա տարվա ծրագրով, յեթե հայտնի յե այն,
իսկ յեթե չե, ապա ընթացիկ տարվա ծրագրով:

4. Առաջարկից սպասվող անտեսումը հաշվելիս, պետք
է համեմատել արտադրանքի արժեքի կալկուլյացիան (յե-
թե առաջարկն իր հիմնական եֆեկտն արտադրութեան
ընդհատվածում է տալու), կամ շահագործման ծախսերը
(յեթե առաջարկն իր հիմնական եֆեկտը տալիս է գյու-
տարարված և կառուցելագործված գործվածքների շահա-
գործման ժամանակ)՝ մինչև առաջարկը գործադրելը և
դրանից հետո: Ըստ վորում յերկու դեպքումն էլ հաշիվ յեն
առնում չիջեցման, վերադրի և այլ ծախսերը: Իսկ այն ծախ-
սերը, վորոնք կազմված են առաջարկի մշակման (գծագրեր,
մոդելներ, նմուշներ և այլն պատրաստելը) և նրա վործարկ-
ման հետ, հաշիվ չի առնվում:

5. Այն առաջարկները վարձատրման չափը, վորոնց

Հիմնական սուուար տնտեսումի մեջ չեն, վորոշում են՝ դյուտարբարութեան ճյուղային մարմինը (միավորման, կենտրոնական վարչութեան և այլն անորնթեր) կամ ձեռնարկութեան վարչութեանը, ըստ պաշտոնի (հոդ. 18 և 20): Այս նպատակով առաջարկը, նախած նրա կարևորութեան, համապարեցվում է այս կամ այն տնտեսում տվող առաջարկի, վորից հետո վարձատրութեան չափն և վորոշվում ըստ համապատասխան շկայայի, սույն հրահանգով նախատեսված հավելումներով և պահումներով:

6. Գյուտերի համար տրվող վարձատրութեանը վորոշվում է հետևյալ շկայայով՝

Տարեկան տնտեսումը		Վարձատրութեան չափը	
մինչև 500 ա.	տնտեսում 30 տոկ, բայց վոչ պակաս 100 ա.		
500 մինչև 1000 ա.	» 20 տոկ և դրան գումարած 50 ա.		
1000 » 5000 »	» 15 » » » 100 »		
5000 » 10000 »	» 12 » » » 250 »		
10000 » 50000 »	» 10 » » » 450 »		
50000 » 100000 »	» 6 » » » 2450 »		
100000 » 250000 »	» 5 » » » 3450 »		
250000 » 500000 »	» 4 » » » 5950 »		
500000 » 1000000 ա.	» 3 » » » 10950 »		
1000000-ից բարձր	» 3 » » » 20950 »		
բայց վոչ ավելի		100.000 ա.	

7. Տեխնիկական կատարելագործումների համար տրվող վարձատրութեանը վորոշվում է հետևյալ շկայայով՝

Տարեկան տնտեսումը		Վարձատրութեան չափը	
Մինչև 500 ա. տնտեսում	30 տոկ, բայց վոչ պակաս 50 ա.		
500 ա. մինչև 1000 ա.	20 » և դրան գումարած 50 ա.		
1000 » » 5000 »	12 » » » 130 »		
5000 » » 10000 »	8 » » » 330 »		
10000 » » 50000 »	5 » » » 630 »		
50000 » » 100000 »	3 » » » 1630 »		
100000 » » 250000 »	25 » » » 2130 »		
250000 » » 500000 »	2 » » » 3880 »		
500000 » » 1000000 »	1,5 » » » 5880 »		
1000000-ից բարձր 1 տոկ.		10880 »	
բայց վոչ ավելի 50.000 ա.			

8. Կազմակերպչական կատարելագործումների համար տրվող վարձատրութեանը վորոշվում է հետևյալ շկայայով՝

Տարեկան տնտեսում		Վարձատրութեան չափը	
Մինչև 500 ա. տնտես.	15 տոկ. բայց վոչ պակաս 25 ա.		
500 ա. մինչև 1000 »	10 » և դրան գումարած 25 ա.		
1000 » » 5000 »	6 » » » 65 »		
5000 » » 10000 »	4 » » » 165 »		
10000 » » 50000 »	25 » » » 315 »		
50000 » » 100000 »	1,5 » » » 815 »		
100000 » » 250000 »	1,25 » » » 1065 »		
250000 » » 500000 »	1 » » » 1690 »		
500000 » » 1000000 »	75 » » » 2940 »		
1,000000 ա. բարձր	0,5 » » » 5440 »		
բայց վոչ ավելի		25000 »	

9. Համապատասխան շկայայով վորոշված վարձատրութեան չափին, հետևյալ հավելումներն են տրվում՝

- ա) 50-ից մինչև 100 տոկոս, յեթե առաջարկն ադատում է իմպորտից կամ յենթարկում է եքսպորտի.
- բ) մինչև 25 տոկոս, յեթե առաջարկը գեֆիցիտային նյութերի տնտեսում է տալիս և արտադրանքի բարձրացում:

Համապատասխան կարգով բարձրացվում է և յետյալատրելի վարձատրութեան առավելագույն գումարը:

10. Բացառիկ դեպքերում համապատասխան ժողովմատի հատուկ վորոշմամբ, կարելի յե սահմանել առավելագույն չափից ավելի բարձր վարձատրութեան:

11. Համապատասխան շկայայով տեխնիկական և կազմակերպչական կատարելագործումներ համարվողների վարձատրութեանից պահանջվում է մինչև 75 տոկոս, յեթե առաջարկը վերցված է այլ ձեռնարկութեանների վործից կամ դրահանութեանից:

Վարձատրութեան չափը վորոշելիս հաշվի չի առնվում և այն դժվարութեանը, վորը կապված է յեղել առաջարկը կիրառելու և ըստ տվյալ ձեռնարկութեան սլաքմանների մշակելու հետ: Յեթե առաջարկը վերցված է ՍՈ-ի կարտուկետայից կամ տվյալ ձեռնարկութեան տարած տեխնիկական դրահանութեանից, ապա վարձատրութեանը սույն հոդվածի

համաձայն, արվում է միմիայն այն դեպքում, յեթե նյութերն ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում ձեռնարկութեան վարչութեանը միջոցներ ձեռք չի առել զբանց ոգտազորման համար:

12. Գյուտերի, տեխնիկական և կադմակերպչական կատարելագործումների համար վարձատրութեան արվում է առաջարկներ անող անձանց, անկախ արտադրութեան մեջ նրանց սենեցած պաշտոնից: Սակայն վարչա-տեխնիկական կազմը, կոնսուլիտորները, ուսցիոնայացման մարմինների, գիտական-հետազոտական ինստիտուտների և այլ աշխատողներն իրենց անմիջական պարտականութեաններ կատարման կարգով տեխնիկական և կադմակերպչական կատարելագործումների համար վարձատրութեան են ստանում կիսի չափով: Յեթե առաջարկն առանձին նշանակութեան ունի կամ յուրահատուկ է, ապա վարչութեանը վարձատրութեանը տալիս է լրիվ, ըստ սահմանված շիտքայի:

Ձեռնարկութեան ղեկավարի և նրա տեղակալի պարգե-վատրման հարցը վորոշում է վերադաս մարմինը:

Ծանոթութիւն.— Այն աշխատողները, վորոնց և հանձնարարված է ՍՈ-ի և ձեռնարկութեան տեխնիկական գրականութեանից սվյալ ձեռնարկութեան համար պիտանի առաջարկներ անել, սույն հրահանգի կարգով վոչ մի վարձատրութեան չեն ստանում:

13. Վարձատրութեանը վճարում են հետևյալ կարգով՝ մինչև 500 ո. վարձատրութեանը արվում է անմիջապես, յերբ համապատասխան մարմինների առաջարկը վերջնականապես պիտանի յեն ճանաչում (այսինքն՝ փորձարկումից հետո, յեթե առաջարկի պիտանի լինելը պարզելու համար անհրաժեշտ է լինում աղբյուրի փորձարկումը):

Յեթե վարձատրութեան չափը 10·000 ո. բարձր չէ, ապա 25 տոկոս արվում է անմիջապես առաջարկը վերջնականապես պիտանի ճանաչելուց հետո, 25 տոկոսը շահագործման մեջ ղենելու պահին, իսկ մնացած մասը՝ շահագործման մեջ ղենելուց վեց ամիս հետո:

Յեթե վարձատրութեան չափը 10·000 ո. բարձր է, ապա առաջարկը վերջնականապես պիտանի ճանաչելուց հետո

արվում է 25 տոկոս անմիջապես, առաջարկը շահագործման մեջ ղենելուց հետո արվում է ևս 25 տոկոս, իսկ մնացած մասը վճարվում է շահագործման առաջին տարին լրանալուց հետո վոչ ուչ քան յերեք ամսվա ընթացքում:

Վարձատրութեան ստացողի ցանկութեամբ, վճարումը կարող է կատարվել և մաս-մաս (յուրաքանչյուր տարի, յետամսյակներով, յուրաքանչյուր ամիս): Այդ մասին հատուկ դրամոր համաձայնութեան է կնքվում:

14. Այն գումարները, վոր վճարում են մինչև առաջարկը շահագործման մեջ ղենելը (հոդ. 13), վորոշվում են առաջարկի շահագործման պլանի համաձայն յենթարկվելիք տնտեսումից յեղնելով (հոդ. 3): Իսկ այն գումարները, վոր վճարում են առաջարկը շահագործման մեջ ղենելուց հետո, վորոշում են շահագործման ժամանակ փաստորեն հայտարարված տնտեսումից յեղնելով: Այն դեպքերում, յերբ գյուտի շահագործումից ստացված տնտեսման չափը յերկրորդ տարում ավելի չէ, քան առաջին տարում, իսկ յերրորդ տարում ավելի, քան յերրորդ տարում՝ լրացուցիչ վճար արվում է յուրաքանչյուր տարին լրանալուց հետո, վոչ ուչ, քան յերեք ամսվա ընթացքում:

15. Յեթե առաջարկ է արված մի քանի հոգու կողմից միասին, ապա վարձատրութեանը բաժանվում է նրանց մեջ ըստ իրենց համաձայնութեան: Համաձայնութեան չկայանալու դեպքում, հարցը, նրանց համաձայնութեամբ, լուծվում է դատարանում կամ հասարակական կադմակերպչութեան կողմից:

16. Լրացուցիչ գյուտի համար վարձատրութեան վորոշվում է այն գումարի հաշվով, վոր չափով վոր ավելացել է հիմնական գյուտից ստացված տարեկան տնտեսումը:

17. Յեթե հիմնական գյուտն ինքնին պիտանի չի ճանաչվում, սակայն հետադայում լրացուցիչ գյուտի կապակցութեամբ կարող է պիտանի ճանաչվել, ապա վարձատրութեան չափը վորոշվում է հիմնական և լրացուցիչ գյուտերի գործադրումից ստացված տարեկան տնտեսումի հաշվով: Ըստ վորում, յեթե լրացուցիչ գյուտն արել է վոչ հիմնական գյուտի հեղինակը, ապա վարձատրութեան բաշխումը յերկու գյուտարարների միջև վորոշում է այն մարմինը, վորը վարձատրութեան չափն է վորոշ սահմանել:

18. Փյունաբերի համար վարձատրութիւնն վորոչում և վճարում են արտադրող կամ սպասող ճյուղի գյուտարարութիւնն ճյուղային մարմինները (միախորումներին, կենտրոնական վարչութիւններին և այլնին առնթեր), համաձայն 22-րդ հոդվածի:

19. Այն ղեկավարում, յերբ միախորման մեջ մտնող ձեռնարկութիւնը կամ տրեսոր գյուտի գործադրման և անցնում ավելի շուտ, քան գյուտարարութիւնն ճյուղային մարմինը (միախորման, կենտրոնական վարչութիւնն և այլն առնթեր), վորոչում և այլ առաջարկի պիտանի լինելու հարցը, սպա նա վարձատրում և գյուտարարին տեխնիկական կատարելագործումները մասին յեղած կանոնների համաձայն:

Իսկ յերբ ճյուղային մարմինը հաստատում և գյուտի գործադրման պլանը, նա միաժամանակ վորոչում և վարձատրութիւնն չափը, յեյնելով այն նշանակութիւնից, վոր ունի գյուտն ամբողջ ճյուղի համար (կամ ամբողջ ժողովրդական տնտեսութիւնն համար՝ յեթե գյուտը նշանակութիւնն ունի գանազան ճյուղերի համար), նույն վարձատրութիւնն մեջ պետք և հաշվե և այն գումարները, վոր ստացել և գյուտարարը ձեռնարկութիւնից կամ տրեսորից:

20. Տեխնիկական և կադմակերպչական կատարելագործումները համար վարձատրութիւնն տալիս և այն ձեռնարկութիւնը, վորը կատարելագործումներն ընդունել և: Իսկ յեթե կատարելագործումի սպասարժանն պլանը վորոչել և ճյուղային մարմինը, սպա վարձատրութիւնն չափը սահմանում և վճարում նույն այլ մարմինը, հաշվելով նաև և արդեն ստացած գումարները:

Դաւանութիւն. — Յեթե գյուտարարութիւնն կամ ուսցիտնալացման առանձին մարմին գոյութիւնն ունի, սպա կադմակերպչական կատարելագործումների համար վարձատրելը կարելի չե հանձնարարել ուսցիտնալիցացման մարմիններին (արդ. ֆինապլանների կատարման և ղեռակատարման հաջողութիւններին, ինչպես նաև գյուտների, տեխնիկական կատարելագործումների և ուսցիտնալացման առաջարկների պարզեփարման ֆոնդերի վերաբերյալ կանոնադրութիւնն 7-րդ հոդվածի համաձայն):

21. Վարձատրութիւնն տալը մերժելու կամ վարձատրութիւնն չափի և վճարման կարգի վերաբերյալ ձեռնարկութիւնն վարչութիւնն ունեցած վորոչումների դեմ, կարելի չե բողոքներ տալ գյուտարարութիւնն ճյուղային մարմինն, իսկ յեթե ձեռնարկութիւնն այլ տեղ և գտնվում՝ Պրոֆմիութիւնն տեղակալ խորհրդի ներկայացուցչի նախադասութեամբ կազմող հանձնաժողովին:

Այն ղեկավարում, յերբ վարձատրութիւնն չափը վորոչում և գյուտարարութիւնն ճյուղային մարմինը (հոդ. 18 և 20), վերջինի վորոչումների դեմ բողոքներ կարելի չե տալ ԱՊԽ առնթեր գյուտերի և տեխնիկական կատարելագործումների կոմիտեյին:

22. Այն ղեկավարում, յերբ առաջարկը վերցրել և մշակելու համար այն մարմինը, վորը համապատասխան սպրանքներ և պատրաստում, սակայն հիմնական եֆեկտն ստացել և՛ նոր գտնված կամ կանտարելագործված իրերը շահագործելու ժամանակ (որինակ՝ շոքերի կամ տրակտորի նոր կառուցվածքը, վորը վառելիքի խոշոր տնտեսում և տալիս), կամ յեթե առաջարկն ունի միջճյուղային նշանակութիւն, սպա վարձատրութիւնն տալիս և այլ իրը պատրաստող մարմինը:

Նման ղեկավարում տարեկան տնտեսման այն մասը, վորը տրվում և գյուտարարութիւնն ոժանդակման ֆոնդի ոգտին, մտցվում և սպրանքի ինքնարժեքի կազմակարգի մեջ: Հիշյալ կանոնը չի կիրառվում այն տեղերում, յերբ առաջարկն ինքնուրույն մշակում են համապատասխան սպրանքներ պատրաստող սպասողները (Ռազմա-ծովային ժող. ծան. Հաղ. ժող., Երանտեսութիւն, Մատ. ժող. համար: Փոստհեղուրծ, Հողփողկամատ, Ժողտնտխորհի ճյուղային միախորումներ և այլն):

Նման ղեկավարում սպրանք պատրաստող մարմիններն իրացնում են առաջարկները սպասողի պատվերները կատարելու կարգով, իսկ վերջինն ինքն և վարձատրում առաջարկի հեղինակին և սահմանված մոտեցումներ կատարում տնտեսումից՝ իր գյուտարարութիւնն ոժանդակման ֆոնդի ոգտին:

23. Աշխատանքի պաշտպանութիւնն և տեխնիկական սպահովութիւնն համար վարձատրութիւնն վորոչում են՝ գյուտ-

տարարութեան ճշուդային մարմինները՝ աշխատանքի համապատասխան կենտրոնական և տեղական մարմնի համաձայնութեամբ, իսկ ձեռնարկութիւնները՝ աշխատանքի տեսչի համաձայնութեամբ:

Աշխատանքի և Պաշտպանութեան Սորճրդին
աօրնթեր գյուտ. կոմ. նախագահի տեղեկալ՝
ՌՌԶԻՆ

Աշխատանքի և Պաշտպանութեան Սորճրդին
աօրնթեր գյուտ. կոմ. քարտուղար՝ ԻՎԱՆՈՎ

Ընդունված և նախագահութեան 1931 թ. հոկտեմբերի
7-ի նիստում:

Սրբազրեցին Հ. Ստոիկյան, և Հարությանյան

Պետհրատի տպարան, Յերևան


Գլավիտա № 8968 (բ):

Տիրաժ 1000:

Պատկեր № 3050

Հանձնված և արտադրության գ հոկտեմբերի 1932 թ.

Ստորագրված և տպագրելու 10 նոյեմբերի 1932 թ



« Ազգային գրադարան



NL0260887

295

